AZG NEW PDF.qxd 2/2/2010 11:11 PM Page 1

Ազգ
Azg

3 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17(4398)

ISSN: 1829-1651
9 771829 165003 10017

# Խոզի գրիպը «լքել» է Հայաստանը

Հայաստանի առողջապահության նախարարի օգնական **Շուշան Հունանյանը** «Պանորամա.ամ»-ին հայտնել է, որ հունվարի 13-ից երկրում խոզի գրիպի նոր դեպք չի գրանցվել: «Բացի դրանից, հանրապետությունում զգալիորեն նվազել են սուր շնչառական վարակներով հիվանդությունները», նշել է Հունանյանը: Իսկ Հայաստանի պոլիկլինիկաներ եւ բուժհաստատություններ դիմողների թիվը՝ այս վարակի հետ կապված, նույնպես նվազել է: «Նույնը վերաբերում է նաեւ «շտապ օգնություն» ծառայություն ահազանգողների թվին», եզրափակել է Շուշան Հունանյանը՝ հիշեցնելով, որ արդեն վերաբացվել են բոլոր մանկապարտեզները, որոնք փակվել էին հենց համաճարակը կանխելու նպատակով:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Էրդողանը չգիտի՞ իր երկրում ապօրինի բնակվող հայաստանցիների իսկական թիվը

Ադրբեջանցիք վարժեցրել են մեզ եւ օտարիներին ամեն առիթով «20 տարվա գրավյալ տարածքների» եւ «մեկ միլիոն փախստականների» մասին իրենց հեքիաթները լսելու: Մի նոր հեքիաթասաց էլ հայտնվել է վերջերս՝ մեր մյուս հարեւան երկրի վարչապետը: Սա էլ քանիերորդ անգամ իր երկրում ապօրինի բնակվող հայաստանցիների թիվը Ռեջեփ Թայիփ Էրդողանը ներկայացնում է մեկ՝ 100, մեկ՝ 70 եւ մեկ՝ 120 հազար: Անշուշտ, ամեն անգամ ավելացնելով, որ տեսեք, տեսեք, «մենք չենք ուզում լարվածություն ստեղծել եւ աչք ենք փակում այս փաստի վրա»: Հենց այսպես էլ ասաց նա կիրակի օրը Թուրքիայի հանրային հեռուստատեսությամբ պատասխանելով լրագրողների հարցերին, որի մասին «**Ազգը**» գրել էր երեկվա համարում: Բարեբախտաբար այս անգամ վարչապետը 20 հազարով նվազեցրել էր իր սիրած թիվը՝ ընդամենը 100 հազար:

Մինչդեռ ապօրինի կերպով Թուրքիայում բնակվող հայաստանցիների իսկական թիվը 12-13 հազար է ընդամենը: Եվ այդ թիվը ոչ մենք ու ոչ էլ հայկական իշխանությունները չեն հորինել: Այդ ուղղությամբ կատարված մասնագիտական ուսումնասիրությունն անցկացվել է 2009 թ.-ին «Եվրասիա» ամերիկյան կազմակերպության ծրագրով (Eurasia Partnership): Ըստ այդ ուսումնասիրության, որը հրատարակվել է նաեւ Պոլսում թուրքերեն հրատարակվող «Ակօս» թերթում, եւ որը լեզվական դյուրության պատճառով անցկացվել է պոլսահայ Ալին Օզինյանի գլխավորությամբ, միայն 2000-2008 թթ.-ին Հայաստանից Թուրքիա գնացած հայերից հետ չեն վերադարձել կամ թուրքական սահմաններից դուրս չեն եկել 6000 հայաստանցիներ: Չվերադարձողների 94 տոկոսը կանայք են, որոնց մեծ մասը տեղում աշխատում է որպես դայակ, հիվանդապահուհի, ադախին կամ վաճառող, գերազանցապես թուրքերի ընտանիքներում կամ խանութներում: Իսկ տղամարդիկ շատ քիչ են եւ սովորաբար չեն աշխատում, իսկ աշխատողները զբաղվում են ոսկերչությամբ: Եվս կարեւոր երկու տվյալ այդ ուսումնասիրությունից՝ տեղի հայերը չեն սիրում նրանց հետ շփվել եւ, երկրորդ, շատ քիչ թիվ են կազմում արտաքսված (դեպորտի ենթարկված) հայաստանցիները՝ սովորաբար ինչ-ինչ հանցագործությունների հետ առնչված դեպքերով:

Զարմանալի է, որ Եվրոմիություն մուտք գործելու մեծ ախորժակ ունեցող երկրի վարչապետը չի կարողանում հաշվել կամ հաշվել տալ իր երկիր մուտք գործած ու երկրից դուրս չեկած այլ երկրի քաղաքացիներին: Զարմանալի է նաեւ, որ հարգարժան Էրդողանը ոչինչ չի ասում եւ չի ասել իր երկրում ապօրինի բնակվող եւ աշխատող միլիոնավոր պակիստանցիների, շրիլանկացիների, ուկրաինացիների եւ մյուսների մասին:

Սա շանտաժ է պարզապես, շատ էժանագին տեսակի: (Դժգո՞հ եք, այդ հայերին վտարեք, իրավամբ ասում էր գործընկերներիցս մեկը վերջերս): Նրանց թիվը տասն անգամ ուռճացնելը, նրանց առանց զգուշացնելու պատանդի կարգավիճակ «շնորհելը» եւ տեղի-անտեղի նրանց ներկայությունը որպես «մարդասիրական» ստառնալիք օգտագործելը զզվելի է: Անպարկեշտ քաղաքականություն:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Ո՞վ իրավունք ունի ժողովրդի անունից խոսելու, եւ ո՞վ է տառապում հոգու հիվանդությամբ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ


ՖՈՏՈԼՈՒՐ

ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության հետ կատարված իրադարձությունների ողջ տրագիկոմիզմը երեկ տեղափոխվել էր Ազգային ժողովի հայտարարությունների ժամ: «Ժառանգության» **Զարուհի Փոստանջյանը**, որը մեկ օր առաջ Հայաստանի պատվիրակների ասուլիսին չէր մասնակցել, ելույթ ունենալով՝ իր ոճի մեջ նկատեց, թե Հայաստանի քաղաքացիների իրավունքներն ու նրանց հիմնարար ազատությունները տարիներ շարունակ խախտվում են օրվա իշխանությունների կողմից, իսկ նրանք, ովքեր պայքարում են դրանց դեմ՝ իշխանության եւ նրա սպասարկուների կողմից ընկալվում եւ հայտարարվում են որպես թշնամի: Նա ավելացրեց, թե այն պաշտոնյաները, որոնք կարծում են, թե իրենք են պետությունը, իրենք են որոշում կայացնողները, պետք է իմանան՝ հայ ժողովուրդը չի մոռանալու մարտի 1-ին տեղի ունեցածը, նաեւ այսպիսի ձեւակերպում արեց. «Հիշեցնեմ ՀՀ ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող անձին...» եւ այլն:

Անմիջապես մի քանի ՀՀԿ-ական տղամարդ (դե, պատգամավոր, էլի) կանգնեցին Ազգային ժողովի նախագահի «թասիբին»՝ դահլիճից բղավելով, որ Փոստանջյանը չի կարող խոսել ժողովրդի անունից եւ պետք է հարգի ԱԺ նախագահին (Առաքել Մովսիսյանը (Շմայս) եւ Վազգեն Կարախանյանը հատկապես): Փոստանջյանը ամբիոնից իջնելիս պատասխանում էր, թե նրա՞նք են խոսելու ժողովրդի անունից, մի խոսքով՝ մի տգեղ իրավիճակ: ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** թեման շարունակեց՝ «սիրով, շատ հաճելի տեսարաններ են» խոսքով: Ըստ նրա՝ բնական է, որ ընդդիմությունը շատ հաճախ իրավամբ հարցականի տակ է դնում իշխանության լեգիտիմությունը, բայց Հայաստանը նաեւ այս հարցում աչքի ընկավ իր ունիկալությամբ, երբ ընդդիմության մի հատված միջազգային ատյաններում փորձում էր ոչ թե իշխանության, այլ ընդդիմության մի այլ հատվածի լեգիտիմությունը հարցականի տակ դնել: Նման բան ընդհանրապես ոչ մի անգամ չի եղել Եվրոպայի խորհրդում կամ որեւէ այլ միջազգային ատյանում, որ քվեարկությամբ որոշեն ՝ Հայաստանում ո՞վ է ընդդիմությունը. «Այս ունիկալ իրավիճակը ոչ միայն պատիվ չի բերում մեր ժողովրդին եւ հասարակությանը, մեր պետությանն ընդհանրապես, բայց ցույց է տալիս, թե ի՞նչ հիվանդության աստիճանի ենք մենք հասել...

Տես էջ 2

## «Հայերի բռնությունները» թեմայով կոնֆերանս Թուրքիայում

Սորգունը Կարաբյուք վիլայեթի վարչական միավորներից է, որտեղ առաջիկա չորեքշաբթի Թուրք ուսուցանողների միության Սորգունի մասնաճյուղն ու Սորգունի արդյունաբերության եւ առեւտրի պալատը համատեղ ջանքերով կկազմակերպեն խնդրո առարկա կոնֆերանսը: Այդ մասին տեղեկացրել է «Սորգունփոստ» տեղական կայքէջը:

Թուրք ուսուցանողների միության Սորգունի մասնաճյուղի ղեկավար Հադի Ինալը «Հայկական բռնություններ» թեմայով կոնֆերանսի կազմակերպման առնչությամբ պարզաբանումներ է արել կայքէջին, ասելով. «Հայաստանի եւ հայկական սփյուռքի ամբարտավան վերաբերմունքի դեմ հասարակական գիտակցության բարձրացումը գերագույն նպատակ պետք է լինի բոլոր կազմակերպությունների եւ միությունների համար: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ, նպատակահարմար գտանք օգտվել մասնագետների ծառայությունից, արդյունաբերության եւ առեւտրի պալատի հետ համատեղ որոշեցինք Սորգուն հրավիրել մասնագետներին, որպեսզի նրանք հայերի կատարած բռնությունների հարցում լուսաբանեն բնակչությանը: Կոնֆերանսին, որպես զեկուցողի, հրավիրել ենք Էրզրումի «Աթաթուրք» համալսարանի դասախոս, «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» միության գլխավոր նախագահ Սավաշ Էղիլմեզին եւ Սերքան Էրդալին: Հրավերն ընդունելու համար նախապես շնորհակալություն եմ հայտնում նրանց»:

Հ. Չ.

## Հայաստանին 40 մլն դոլար՝ ԱՄՆ-ից

Երեկ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսին է ներկայացրել հաջորդ տարվա ֆինանսական բյուջեն՝ 3.8 տրիլիոն դոլարի չափով: Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (ANCA) հաղորդմամբ՝ նախատեսվում է 2011-ին Հայաստանին հատկացնել 40 մլն դոլար օգնություն: Այն 10 մլն-ով ավելի է 2010-ին Հայաստանին նախատեսվածից, սակայն 1 մլն-ով պակաս Կոնգրեսի հաստատածից:

Զինված ուժերի ֆինանսավորման համար նախատեսված ԱՄՆ օգնությունը նախատեսում է հավասարակշռություն պահպանել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ. յուրաքանչյուր երկրին տրվելու է 3.5 մլն դոլար:

«Ողջունում ենք Օբամայի որոշումը՝ 10 միլիոնով մեծացնել ֆինանսական օգնությունը Հայաստանին: Նաեւ որոշումը՝ պահպանել հավասարակշռությունը Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերին վերաբերող հարցերում», հայտարարել է ANCA-ի գործադիր տնօրեն **Արամ Համբարյանը**:

Հիշեցնենք, որ նախորդ տարիներին Սպիտակ տունը մի քանի անգամ փորձել է խախտել հավասարակշռությունը հօգուտ Ադրբեջանի, սակայն հանդիպել է Կոնգրեսի անհամաձայնությանն ու դիմադրությանը:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ նախագահը նախատեսում է Եվրոպայի եւ Ասիայի երկրներին տրամադրել 599 մլն 164 հազար դոլար, ինչը 11 մլն 818.000-ով պակաս է, քան նախորդ տարի:

Հ. Հ.

## Եթե չեն ուզում լսել, կուզես պայթիր

### *Եվրոպական փաստաթղթերը, մարդու իրավունքների պաշտպանությունն ու վրացական իրականությունը*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքները պետք է հարգվեն. դրանց մերժումը քայքայում է մարդու իրավունքները եւ միջհամայնքային ընդհարումներ առաջացնում»: «Երկիր» միությունը ուշադրություն է հրավիրում հունվարի 25-ին Եվրոխորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար **Թոմաս Համմարբերգի** տարածած այս հայտարարությանը՝ ուղղված Եվրոխորհրդի անդամ երկրներին, այդ թվում՝ Վրաստանին: Փաստաթղթում եւս մեկ անգամ ամրագրվում են ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանության միջազգային ու եվրոպական չափանիշները:

Վրաստանի հայ փոքրամասնության համար առավել հրատապ են Համմարբերգի հայտարարութան մի շարք դրույթներ: Մասնավորապես, ըստ Համմարբերգի տարածած հայտարարության, անձնագրերում անձնանունների գրության ձեւը, փողոցների անուններ եւ այլ տեղանուններ մայրենի լեզվով փակցնելը, դպրոցներում օգտագործվող լեզուն, իշխանությունների հետ հաղորդակցվելու լեզուն, փոքրամասնությունների լրատվամիջոցների հիմնադրման հնարավորությունը նման հարցեր նորից ու նորից բարձրացվում են եվրոպական մի քանի երկրների փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից:

«Լեզվական խնդիրներին առնչվող հարցերը նոր ֆենոմեն չեն: Իսկապես, մարդու իրավունքների վերաբերյալ մի քանի միջազգային եւ եվրոպական համաձայնագրերում ձեւակերպվել են նորմեր՝ նվիրված այդ խնդիրների կարգավորմանը», նշվում է հայտարարության մեջ՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված փաստաթղթերի հիշատակությանը զուգահեռ:

Վրաստանում հայ փոքրամասնության առնչությամբ հատկապես կարելի է մեջբերել Համմարբերգի հայտարարության այն հատվածը, որ վերաբերում է փոքրամասնության գերակշռությամբ շրջաններում լեզվի հարցերին: Մասնավորապես, «Այն շրջաններում, որի բնակչության գերակշիռ մասը կազմում են փոքրամասնության ներկայացուցիչները, տեղական իշխանությունները պետք է ընդունեն, որ անհրաժեշտության դեպքում փոքրամասնության լեզուն պետք է օգտագործվի պաշտոնական լեզվին զուգահեռ»:

Տես էջ 2

## Հայկական առաջին հեռուստաալիքը Ռուսաստանում

Սեպտեմբերի 1-ին Ռուսաստանում առաջին անգամ կհեռարձակվի առաջին հայկական տեղեկատվական եւ ժամանցային հեռուստաալիքը: Առաջնահերթ նպատակն է լուսաբանել հայերի ակտիվ մասնակցությունը համաշխարհային հասարակական, քաղաքական եւ այլ իրադարձություններին, որոնք անմիջական կապ ունեն հայերի սոցիալ-տնտեսական զարգացման հետ ԱՊՀ երկրներում, Ասիայում, Եվրոպայում եւ Ամերիկայում:

Հեռուստաալիքի նախապատրաստական աշխատանքներին ու առաջնահերթ նպատակներին կարելի է ծանոթանալ http://www.tvarmenia.ru հեռուստալիքի պաշտոնական կայքէջում:

«Նման հեռուստաալիքի գոյությունը շատ կարեւոր է հատկապես ապագա սերունդների համար՝ նրանց մեջ հայ ժողովրդի լավագույն գծերն ու արարքները, հարուստ մշակույթը, լեզուն, հավատքը, իմաստուն ավանդույթները սերմանելու համար», ասել են հեռուստաալիքը նախաձեռնողները:

# Սահմանի բացումը հնարավոր է միայն եթե-ների կատարման դեպքում

Œ‡ ˆÆ1æø »æ˙‡º‡æ„»æ˙ ˇ‡æ˝˙ø ¿

Հայ թուրքական սահմանի բացման հնարավորությունը չեն բացառում, բայց եւ մոտ ապագայում չեն էլ ակնկալում թուրք երիտասարդները: Դեռ ավելին, նրանք կարծում են, որ սահմանի բացումը եւ հարաբերությունների սկսումը կախված են միմիայն հայկական կողմից:

**Մեհթափը 26** տարեկան է, մասնագիտությամբ ուսուցչուհի է: Սահմանների բացմանը չի հավատում եւ գտնում է, որ Թուրքիան դեռ երկար պետք է մտածի որոշումն ընդունելուց առաջ: «Ամեն ինչ կախված է հայկական կողմի քայլերից: Եթե դուք դադարեք Եվրոմիության, Միացյալ Նահանգների եւ մյուս երկրների վրա ճնշում գործադրել եւ կանխել Թուրքիայի մուտքը միջազգային կառույցներ, ապա Թուրքիան, հաշվարկելով բացասական եւ դրական կողմերը, կորոշի՝ բացել սահմանը, թե՝ ոչ», նշեց Մեհթափը: Սահմանի բացման համար, Մեհթափի կարծիքով, այլ խոչընդոտներ չկան:

Ուսուցիչ **Օմեր Ֆարուք Թյորերը** 35 տարեկան է: Սահմանի բացման համար Օմերը որեւէ նախապայման առաջ չի քաշում. խոչընդոտներ էլ չի նշում: «Սահմանները անկասկած կբացվեն, կարծում եմ առաջիկա երկու տարիների ընթացքում», ասաց Օմերը:

«Սահմանը պետք է որ բացվի: Բայց չեմ կարծում, որ դա տեղի կունենա: Երկու երկրների միջեւ մի քանի կոնֆլիկտներ կան: Բացի այդ, Թուրքիայում կառավարությունն այս նախաձեռնությունը վեր է ածել լոկալ քաղաքական խնդրի», նկատեց **Շենոլ Քարաբալթօղլուն**: Շենոլը 27 տարեկան է եւ աշխատում է հասարակական կազմակերպությունում:

Սահմանի բացումը, նրանց կարծիքով, առաջին հերթին անհրաժեշտ է Հայաստանին: Տնտեսական աջակցություն, այլընտրանքային ուղի աշխարհին միանալու համար. թվարկում են նրանք Հայաստանին սպասվող օգուտները սահմանի բացման դեպքում եւ զարմանում, որ Հայաստանն ու սփյուռքը շարունակում են «կեղծ տեղեկություններ տարածել» Թուրքիայի մասին: Եվ եթե Օմերն ու Շենոլը գոնե երբեմն փորձում են կասկածի ենթարկել սեփական կառավարության քաղաքականության դիրքորոշումները եւ հիմնուրույն դատել սփյուռքի պահանջատիրության եւ ցեղասպանության ճանաչման կոչերի մասին, ապա Մեհթափը մի պահ անգամ չի կասկածում թուրքական քաղաքականության ճշմարտացիությանը:

«Իմ կարծիքով՝ Հայաստանը մեր այն հարեւանն է, որ թաքնվում է կեղծիքի հետեւում: Եթե հայերն ուզում են հարեւանություն անել մեզ հետ, ապա պետք է վերջ տան իրենց մեղադրանքներին», ասաց Մեհթափը:

Շենոլը նշում է, որ թուրք հասարակության համար հայերը թշնամի են, ինչպես հույները: «Մեծամասնությունը չի ուզում հարաբերություններ ունենալ Հայաստանի հետ: Պատճառն, իմ կարծիքով, սիրող նախապաշարմունքներն են: Եվ այստեղ մեծ դեր ունի մամուլը, որը հաճախ է սադրիչ հայտարարություններ անում», ասաց Շենոլը:

Շեշտելով, որ այսօր Թուրքիայում ապրում եւ աշխատում են Հայաստանի քաղաքացիներ, նրանք նկատում են, որ իրականում դեմ չեն Հայաստանի հետ հարեւանություն անելուն, սակայն նախապայմաններ թելադրելուց զերծ չեն մնում: Եթե-ների շարքը սկսվում եւ ավարտվում է հայկական կողմի քայլերով: «Վերջ տալ ցեղասպանության ճանաչմանը, լուծել կոնֆլիկտները, եւ նոր միայն կբացվի սահմանը», ասացին նրանք:

Հայկական կողմից առանց նախապայմանների հարաբերությունների հաստատման հնարավորությունը նրանք անիրականանալի են համարում:

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ

# 500 մլն դոլարանոց համաձայնագիրը վավերացվեց

**«Առաջին անգամ մենք ուզում ենք թանկ ու լավ ճանապարհ կառուցել, մինչեւ հիմա այդպես չենք կառուցել». ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի այս խոսքը վերաբերում է այն համաձայնագրի առարկային, որով Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի կառուցման համար՝ Հայաստանի եւ Զարգացման ասիական բանկի միջեւ շրջանակային ֆինանսական համաձայնագրով 500 մլն դոլար է հատկացվելու Հայաստանին: Երեկ 107 ձայնով Ազգային ժողովն այդ համաձայնագիրը վավերացրեց: Նիկոյանն, ինչպես եւ շատ ուրիշ ելույթ ունեցող պատգամավորներ, մտահոգված էին այս ծրագրի իրականացման կոռուպցիոն ռիսկերով, մասնանշվեց պառլամենտական վերահսկողության անհրաժեշտությունն այս հարցում եւ ընդհանրապես վերահսկողության բոլոր գործիքները՝ ԱԺ-ում ինչող հարցերից ու հարցապնդումներից սկսած մինչեւ Վերահսկիչ պալատի ստուգումներ ու հակակոռուպցիոն հանձնաժողով:**

**Փաստորեն այս հսկա գումարը՝ 500 մլն դոլարը, որի առաջին տրանշը կազմելու է 60 մլն դոլար, Հայաստանի էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի խոսքով, ներդրվում է մի կառուցման ծրագրում, որը ներառելու է ճանապարհային ենթակառուցվածքների բարեկարգման եւ արդիականացման, մաքսային համակարգի զարգացման նախագծերը: Վարկը տրամադրվելու է տարեկան 1 տոկոս տոկոսադրույքով, 8-ամյա արտոնյալ շրջանով, իսկ հետագա 24 տարվա ընթացքում տոկոսադրույքը կհասնի 1,5-ի: Հյուսիս-հարավ տրանսպորտայինը Եվրոպա-Ասիա միջանցքի շարունակությունն է եւ տարածաշրջանային նշանակություն ունի, որից կօգտվեն նաեւ հարեւան պետությունները:**



**Մ. Խ.**

# Եթե չեն ուզում լսել, կուզես թայթիր

*1-ին էջից*

**Բոլոր այն դեպքերում, երբ այս պահանջի կատարման մասին բարձրաձայնում են ջավախահայերը կամ նրանց շահերի պաշտպանության կազմակերպությունները ու անձինք, Վրաստանն անմիջապես արձագանքում է հայերին «անջատողականներ» պիտակելով:**

**Որ կրթական ոլորտում հայերը Վրաստանում բազում խնդիրներ ունեն, նորություն չէ: Նորություն չէ նաեւ իշխանությունների հետ, այդ թվում՝ դատական, հարաբերվելու առնչությամբ փոքրամասնությունների իրավունքների բարձրաձայնումը: Սակայն «Ազգի» ընթերցողները հիշում են ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի դատավարության ընթացքը, երբ դատարանում այդպես էլ հոդաբաշխ, հասկանալի ու տեղի ունեցողը քիչ թե շատ թարգմանող հայերեն չհնչեց: Մինչդեռ Համմարբերգն իր հայտարարության մեջ ընդգծում է, որ իշխանությունների հետ մայրենի լեզվով հաղորդակցվելու հնարավորությունը մարդու իրավունքների բնագավառի մեկ այլ խնդիր է, որ բարձրաձայնվում է ազգային փոքրամասնությունների կողմից: «Շրջանակային կոնվենցիան եւ Լեզուների խարտիան սահմանում են, որ իշխանությունները պարտավոր են փորձել գործարկել նման հաղորդակցությունը այնքանով, ինչքանով հնարավոր է եւ որտեղ առկա է դրա իրական կարիքը», ասվում է մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի հայտարարությունում:**

**Իսկ այն, որ վրացերեն Վրաստանում բնակվող հայերը պետք է իմանան, որեւէ մեկը չի հերքել, սակայն վրացական կողմի լեզվի իմացության պահանջներին հաճախ վրացերենի մասնագետները չեն կարող բավարարել, ուր մնաց Ջավախքի՝ վրացերենի ուսուցիչ վաղուց չունեցող դպրոցների սաները: Այս առումով էլ Համմարբերգը նշում է. «Աշխատանքի ընդունման իրենց քաղաքականության մեջ հանրային կառավարման մարմինները չպետք է պահանջեն պետական լեզվի իմացություն առավել քան անհրաժեշտ է տվյալ մարմնում աշխատելու համար պահանջվածից: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց զբաղվածության հասանելիությունը չպետք է անհիմն սահմանափակվի: Դրա հետ զուգահեռ անհրաժեշտ է դյուրացնել կառուցողական մոտեցում, օրինակ պետական լեզվի ուսուցման հնարավորություն ստեղծելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից դիմողների համար: Միեւնույն ժամանակ, ազգային փոքրամասնությունների լեզուների իմացությամբ պետծառայողների աշխատանքի ընդունելը թույլ կտա կառավարման մարմիններին էլ ավելի լավ սպասարկել ամբողջ բնակչությանը: Պետք է խուսափել պետական լեզվի բռնի ներմուծմանն ուղղված պատժամիջոցներից»:**

**Համմարբերգն այդուհետեւ ընդհանրացնում է. «Վերոնշյալ հարցերի ուսումնասիրությունից քաղվելիք հիմնական դասն այն է, որ մարդու իրավունքներին առնչվող մտահոգությունները կարող են արդյունավետ լուծվել միայն ազգային փոքրամասնությունների իրական պահանջմունքների լուրջ գնահատման միջոցով: Շատ հաճախ իշխանությունները հաշվի չեն առնում դրանք, երբ մշակում են իրենց քաղաքականությունը: Չափազանց կարեւոր է, որ իշխանությունները սերտ կապեր պահպանեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ եւ ձգտեն հաստատուն ու շարունակական խորհրդակցությունների կառուցողական երկխոսության»:**

**Հետաքրքրական է, թե վրացական իշխանություններն ինչպես են վերաբերվում այս հայտարարությանը: Գուցե դրական, եթե հաշվի առնենք, որ Վրաստանը կույր հետեւողականությամբ ու համառությամբ «զբաղվում է օկուպացված տարածքների», ասել է թե՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի փոքրամասնությունների խնդիրներով, մինչդեռ երկրի ներսում հայ ու ադրբեջանցի ու էլի մի շարք փոքրամասնություններ ոչ լեզվի, ոչ կրոնի, ոչ էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից օգտվելու հնարավորության չեն արժանանում:**

# Ո՞վ իրավունք ունի ժողովրդի անունից...

*1-ին էջից*

Նման մեթոդները շատ լուրջ հարված են մեր հեղինակությանը», ասաց նա՝ նկատելով, թե եղածը դաս է բոլոր նրանց համար, ովքեր փորձում են Հայաստանի ներքին խնդիրները լուծել արտաքին ճնշումը, արտաքին ազդեցությունը մեր երկրի վրա հրավիրելով: Սակայն «Ժառանգության» վարչության նախագահ **Արմեն Մարտիրոսյանն** այլ կարծիքի էր, նա հարցեր ուղղեց խորհրդարանական գործընկերներին՝ մոտավորապես այսպիսի. ո՞րն է հակապետական գործունեությունը՝ անմեղ քաղաքացիներ սպանելը, թե՞ այդ սպանությունների բացահայտումը պահանջելը, թուրքական նախապայմաններին «այո» ասելը, թե՞ ցեղասպանության հետեւանքների համար պատասխանատվության «ոչ» հնչեցնելը, Հայաստանը բնական հումքի կցորդ սարքելը, թե՞ սերունդներին էկոլոգիապես մաքուր Հայաստան թողնելը, բնակչին աքարի տեղը ցույց տալը, թե՞ բարեկեցիկ եւ սոցիալապես ապահով կարգավիճակի նախադրյալներ ստեղծելը: Եվ ավարտեց Զիվանու հայտնի տողերով. «Գայլը ոչխարի մորթին առել, գառներին պահապան հսկող է դառել, խելքի աշեցեք, աքլորը քուրքչի վերարկու հագել, ամբիոն է ելել, խելքի աշեցեք»:

ՀՀԿ-ական **Էդուարդ Շարմազանովն** էլ իրեն զերծ չպահեց այս թեմային խառնվելուց՝ խոսելով «վայ» գործիչների մասին, ովքեր քաղաքական շանտաժով են զբաղված եւ քաղաքական արկածախնդիրներ են հիշեցնում. «Հայաստանի վրա տղա կանչելու սովորույթը ներքին եւ արտաքին քաղաքականության մեջ սովորույթ է դառնում»: Եվ խոսեց, որ ԱԺ ամբիոնից հարցանքով պետք է վերաբերվել մեկը մյուսին, ԱԺ նախագահին եւս պաշտպանեց՝ պետական ինստիտուտի խորհրդանիշն է. «Հոգու հիվանդությամբ են տառապում բոլոր այն քաղաքական գործիչները, ովքեր բողոքում են սեփական հայրենիքից», ամփոփեց թեման նա:

Մեզ թույլ տանք նկատել, որ այս թեման արդեն նմանվում է ֆարսի, եւ շատ ստերեոտիպային մտայնություն է մեկին, այն էլ կին պատգամավորի, թիրախ դարձնելը, որպեսզի սեփական «ախ այնպիսի հայրենասիրությունն» ի ցույց դրվի, ինչը թափանցել է անգամ մամուլ. համաձայնությունների դաշտում աշխատելու անկարողության համար չի կարելի մի հարմար քավության նոխազ ընտրել եւ մարդկանց ուշադրությունը շեղել այդ ուղղությամբ:

## Բլից՝ փակուղի՞, թե՞ ոչ

Երեկ մի փոքրիկ ճեպազրույց էինք անցկացրել, թե արդյո՞ք փակուղի են մտնում հայ-թուրքական հարաբերությունները: Պատասխանները փակուղային չէին: ԲՀԿ-ական **Արամ Սաֆարյան**. «Քանի Արեւմտյան Եվրոպան, ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը շարունակում են հովանավորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ մղելով կողմերին շարունակելու դրանք, այդքան նրանցից է կախված լինելու գործընթացի հետագա զարգացումը: Ամեն դեպքում մենք սպասում ենք Արձանագրությունների վավերացմանը Թուրքիայի խորհրդարանում»: **Գալուստ Սահակյան** (ՀՀԿ). «Չեմ կարծում, որ փակուղի է, որովհետեւ վերջին օրերի ընթացքում միջազգային հանրության արձագանքները կան, այսօր (երեկ-Մ.Խ.) նաեւ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնի տեսակետը կա, որ որեւէ հարցի հետ չի կարելի խնդիրը կապել, ընդ որում՝ նա հարցն իմպերատիվ ձեւով է դրել: Այնպես որ, թուրքական շեշտադրումները պետք է որ փոխվեն, արդեն իսկ այդպիսի փոփոխություն նկատվում է»: **Արտաշես Շահբազյան** (ՀՅԴ). «Փակուղի կլիներ, եթե թուրքական կողմը դեմ լիներ, բայց դեմ չէ, եւ ես կարծում եմ, որ թուրքական կողմը կվավերացնի Արձանագրությունները, պարզապես ցանկանում է ավելին ստանալ: Արդեն իսկ նախապայմաններ ամրագրված են Արձանագրությունների մեջ: Եթե ՍԴ որոշումը չարտացոլվի որպես վերապահում՝ նրանք վավերացնելիս շահող կողմ են դուրս գալիս: Բայց թուրքերը ձեռքի հետ զուգահեռ նաեւ Ղարաբաղի հարցն են ուզում լուծել, նրանց հիստերիան ավելի շատ ուղղված է դրան: Հայկական կողմը պետք է կարողանա շարունակել այն տրամաբանությամբ, ինչ ՍԴ-ն է պարտավորեցրել»:

Մեր այս ճեպազրույցներին ավելացնենք **Է. Շարմազանովի** ձեւակերպումը ԱԺ հայտարարությունների ժամին, թե թուրքերը Արձանագրությունները ձգձգելու իրենց քաղաքականությունը շարունակելով՝ քաղաքական ապտակ ստացան նախ Ռուսաստանից, այնուհետեւ ԱՄՆ պետքարտուղարությունից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/2/2010 10:24 PM Page 1





# Հրանտ Բագրատյանը կամ շփոթված է, կամ՝ անտեղյակ

Թեեւ վարչապետ Հրանտ Բագրատյանը վերջերս սկսել է խոսել նաեւ ցեղասպանության եւ հայ-թուրքական հարաբերությունների մասին, ինչի մասին անդրադարձ է եղել մեր թերթի նախորդ համարում, այդուհանդերձ, նախկին վարչապետի մտքերից առավել հետաքրքրական են տնտեսական իրավիճակի մեկնաբանություններն ու գնահատականները: Ծանոթանալով դրանց, դժվար է լինում հավատալ, թե այդ մարդն իսկապես տնտեսագետ է եւ երբեւէ եղել է մեր երկրի վարչապետը: Քանի որ մամուլի ասուլիսներում եւ իր հրապարակումներում վերջինս արտահայտվել է մեր տնտեսության ու կառավարության տնտեսական քաղաքականության բազթոշակները ոչ թե սառեցվում, այլ ընդհանրապես ամիսներով ու անգամ տարիներով չէին վճարվում: Թե այժմ այդ ի՞նչ աշխատավարձեր ու թոշակներ են սառեցվել, Հրանտ Բագրատյանը չի նշում: Մինչդեռ 2009-ին աշխատավարձերն ու թոշակները, անկախ ճգնաժամից, որոշ չափով աճել են, իսկ 2010 էլ դեռ նոր է սկսվել: Իսկ թե ինչ կապ ունի այդ ամենի հետ Հյուսիսային պողոտան, երեւի միայն Հրանտ Բագրատյանին է հայտնի:

Ինչ վերաբերում է շինարարությանը եւ կառուցապատողներին աջակցելուն: Հայտնի է, որ այս ճյուղում վերջին տարիներին մեծածավալ ներդրումներ են կատարվել (այլ ոչ թե ռեսուրսներ փոշիացվել), ունեցել ենք ասելու: Հիմա էլ նախկին վարչապետն ասում է, որ դոլարի իրական փոխարժեքն այսօր պետք է լիներ 470 դրամի սահմաններում: Հավանաբար ինքն էլ է հասկացել, որ 400-800 միջակայքը միայն ծիծաղ է առաջացնում: Սակայն այստեղ ուշադրության է արժանի երկու այլ հանգամանք:

Նախ, եթե անցյալ տարի դրամի փոխարժեքի անկումը Բագրատյանը ներկայացնում էր որպես առնվազն ողբերգական իրադարձություն, ապա այժմ, տեսնելով, որ իր «պայծառատեսությունը» չի իրականացել եւ դոլարի փոխարժեքն անգամ 400 դրամին չի հասել, դրամի արժեզրկումը կարեւորում է որպես անհրաժեշտ միջոցառում:

մաթիվ հարցերի վերաբերյալ, ապա բոլորին մեկ հրապարակման մեջ անհնար է անդրադառնալ:

Հրանտ Բագրատյանին հստակապես դուր չեն գալիս կառուցապատողներին կառավարության կողմից ցուցաբերվող աջակցությունը եւ ընդհանրապես Հայաստանում վերջին տարիներին իրականացվող լայնածավալ շինարարությունը: Դա, թերեւս, հասկանալի է: Նրա վարչապետության տարիներին ամեն ինչ քանդվում էր, ամեն ինչ փակվում: 90-ականների առաջին կեսին, Համաշխարհային բանկի տվյալներով, Հայաստանում փակվեց 600 հազար աշխատատեղ: Այս թիվն այնքան խոսուն է, որ ավելացնել ոչինչ պետք չէ: Այժմ՝ մտապես ինքն իրեն գովաբանող տնտեսագետի տեսակետների մասին՝ ըստ էության:

Հրանտ Բագրատյանը սխալ է համարում կառուցապատողներին խրախուսելը, «20 հազար շքեղ բնակարաններ կառուցելն» ու «ռեսուրսները փոշիացնելը» (ով է խոսում ռեսուրսներ փոշիացնելուց- Ա. Մ.): Նրա մտքի փայլատակումը հասնում է այնտեղ, որ Հյուսիսային պողոտայի կառուցումը համարում է 2009-ին եւ 2010-ին թոշակների եւ աշխատավարձերի սառեցման հիմնական «մեղավորներից մեկը»:

Նախկին վարչապետը դարձյալ շփոթում է իր կառավարման տարիները ներկայիս հետ: Այդ այն տարիներն էին, որ աշխատավարձերն ու տասնյակ հազարավոր աշխատատեղեր ստեղծվել, եւ ճգնաժամի ամենամեծ հարվածը ստացավ հենց այս ճյուղը: Եթե կառավարությունը չփորձեր որեւէ կերպ այս իրավիճակում աջակցել շինարարությանը, նպաստելով, որ գոնե մասամբ պահպանվեին այստեղ ստեղծված աշխատատեղերը, ապա այն ժամանակ արդեն իսկապես արժանի կլիներ արդարացի քննադատության:

Դարձյալ անտեղյակությո՞ւնն է պատճառը, թե՞ նախկին վարչապետն ընկալելու խնդիր ունի, երբ, շարունակելով այս թեման, առաջարկում է կառուցապատողներին աջակցելու փոխարեն վարկավորել գնորդներին, այսինքն՝ խթանել պահանջարկը: Մի՞թե հիպոթեկային ընկերության հիմնադրման, երիտասարդ ընտանիքների համար հիպոթեկային մատչելի վարկավորման ծրագրերի, այդ նպատակով հատկացված միլիարդավոր դրամների մասին նա ոչ մի տեղ չի լսել կամ չի կարդացել: Ինչ է, դա պահանջարկը ֆինանսավորել չի՞ նշանակում: Ինչպէս:

Մեկ այլ՝ փոխարժեքի թեման Հրանտ Բագրատյանի համար մի տեսակ հոբբի է դարձել: Անցյալ տարի նա կանխատեսում էր, որ փոխարժեքը շուտով կգահավիժի եւ տարեվերջին կգտնվի 400-800 դրամ 1 դոլարի դիմաց միջակայքում: Այն, որ նման միջակայքի մասին խոսելն արդեն անգրագիտություն է, առիթ

Երկրորդ՝ նա հիմա խոսում է դրամի գերարժեւորման մասին, ասելով, որ եթե շուկային չմիջամտեն, ապա դրամն այդ չափով կարժեզրկվի: Մինչդեռ անցյալ տարվա մարտից առաջ եւ հետո միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչներն ու փորձագետները բազմիցս ասել են, որ մինչեւ ԿԲ կողմից լողացող փոխարժեքի քաղաքականությանը վերադառնալը դրամը գերարժեւորված էր 20-30 տոկոսով: Մոտ այդքան էլ արժեզրկվեց մարտի 3-ից հետո եւ շարունակում է գտնվել այդ միջակայքում, երբեմն անգամ հակասելով միջազգային շուկաներում դոլարի արժեզրկման միտմանը: Իսկ թե ինչո՞ւ է «հայտնի» տնտեսագետը սեւեռվել հատկապես 470 թվի վրա, այնքան էլ պարզ չէ: Ինչո՞ւ ոչ 460 կամ 480: Երեւի այս թվերն այդքան էլ նրա սրտով չեն, թե չէ Հրանտ Բագրատյանի նման տնտեսագետի համար առանձնակի տարբերություն չկա, թե փոխարժեքի մասին խոսելիս ինչ թվեր կարելի է «կրակել» եւ ինչպիսի դիպուկությամբ՝ հակառակ նախկին կանխատեսումների պահելի միջակայքի:

Երեւի թե այսքանը բավարար է մոտավոր պատկերացում կազմելու Հրանտ Բագրատյանի տեսակետների մասին եւ հասկանալու, թե ինչու էինք մենք եւ մեր տնտեսությունը հասել աղետի եզրին նրա վարչապետության տարիներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Արդշինինվեստբանկը»՝ բանկային համակարգի առաջատար սոցվճարների ծավալով

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկի» մամուլի ծառայությունից, բանկը 2009-ի տվյալներով Հայաստանի բանկային համակարգի առաջատարն է պետական բյուջե կատարած սոցիալական վճարների ծավալով եւ 2-րդ բանկը խոշոր հարկատուների ցուցակում: Մասնավորապես, անցյալ տարի «Արդշինինվեստբանկի» վճարած սոցիալական վճարները կազմել են 328 մլն դրամ, իսկ ընդհանուր հարկային վճարները՝ 2,3 մլրդ դրամ:

2009-ի գործունեության հիմնական ցուցանիշների գծով բանկը գտնվում է Հայաստանի բանկային համակարգի առաջատար հնգյակում: Այն երկրորդն է ստացված զուտ շահույթի (1 935 մլն դրամ) եւ ընդհանուր կապիտալի (27 335 մլն դրամ) մեծություններով: Ընդհանուր ակտիվների մեծությամբ «Արդշինինվեստբանկը» բանկային համակարգում զբաղեցնում է 4-րդ, իսկ ընդհանուր պարտավորությունների մեծությամբ՝ 5-րդ տեղը:

Այս ցուցանիշների կապակցությամբ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ **Ներսես Կարամանուկյանը** մասնավորապես նշել է. «Մենք հաջողությամբ հաղթահարեցինք դժվարին 2009 թվականը: Միջազգային ֆինանսական ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ ինչպես Հայաստանի ողջ տնտեսության, այնպես էլ բանկային համակարգի վրա: «Արդշինինվեստբանկը», սոցիալական եւ հարկային պարտավորությունների բարեխիղճ կատարմամբ, շարունակում է սատարել պետությանը՝ սոցիալական ծրագրերի իրականացման գործում»:

Ա. Մ.

# Հայերեն բանավոր խոսքը կվերածվի գրավորի

Ռուս-հայկական սլավոնական համալսարանի կիրառական մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան **Վլադիմիր Եղիազարյանը** «Նյուզ.ամ»-ին տված հարցազրույցում նշել է, որ Հայաստանում ստեղծվում է համակարգչային ծրագիր, որով բանավոր խոսքը կվերածվի գրավորի: Եղիազարյանը նշել է, որ այս ծրագիրը լայն կիրառություն կգտնի հատկապես բանավոր խոսքի սղագրությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաեւ սահմանափակ կարողություններով մարդկանց մեջ:

Ծրագրավորող խմբի հետազոտողներից Հարություն Գասպարյանը «Նյուզ.ամ»-ին հայտնել է, որ համակարգչային ծրագրում ձայնի տեմբրի տարբերակման համար թեստային համակարգ է օգտագործվում: «Առաջարկում ենք արտասանել մի քանի նախադասություններ, որից հետո ծրագիրն արդեն ճանաչում է «տիրոջ» ձայնը», նշել է Գասպարյանը:

Նշված համակարգչային ծրագիրն իրականացնելու է երեք ֆունկցիա. նախ հայերեն բանավոր խոսքով ղեկավարելու է Word ծրագիրը, հետո բանավոր խոսքը վերածելու է տեքստի եւ վերջում իրականացնելու է արդեն հավաքված տեքստի ձայնային վերարտադրություն:

Հ. Ա.



# Հայ երիտասարդ մասնագետները վերապատրաստում կանցնեն Եվրոմիությունում

2010-ին նոր ծրագիր կմեկնարկի Հայաստանի համալսարանական նոր շրջանավարտների համար: Նրանք հնարավորություն կունենան անմիջականորեն ծանոթանալու Եվրոմիության քաղաքականությանն ու փորձին: Երեկ այս մասին համաձայնագիր ստորագրեցին ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, եվրոպական կառույցների հետ Հայաստանի պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ **Արթուր Բաղդասարյանը**, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության ղեկավար, դեսպան **Ռաուլ դե Լուցենբերգերը**, ինչպես նաեւ Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նորանշանակ մշտական ներկայացուցիչ **Դաֆինա Գերչեւան**:

Երիտասարդների վերապատրաստման այս ծրագիրը թույլ է տալիս շրջանավարտներին սերտորեն աշխատել ԵՄ-ի խորհրդատուների հետ գործունեության համապատասխան ոլորտներում, ինչպիսիք են՝ առեւտուրը, մաքսային համակարգը, հանրային կառավարման ոլորտի բարեփոխումը, պետական պարտքը, մարդու իրավունքները: Մեր երիտասարդ մասնագետները կստանան բացառիկ հնարավորություն՝ ծանոթանալու եվրոպական չափանիշներին, որոնք կկիրառվեն Հայաստանում:

Հարցազրույցի անցկացման եւ երիտասարդ մասնագետների ընտրության նպատակով կստեղծվի անկախ ընտրական հանձնաժողով, որի կազմում կլինեն ներկայացուցիչներ ԵՄ-ի պատվիրակությունից, ՀՀ նախագահի աշխատակազմից, ՄԱԿ-ի զարգացման ծրագրից եւ այլն: Ընտրված մասնագետները կընդունվեն մեկ տարի ժամկետով եւ կվարձատրվեն: Նրանք կաշխատեն անմիջականորեն իրենց կցված ԵՄ-ի խորհրդատուի հետ, թիմի ղեկավարի վերահսկողությամբ:




Համաձայնագիրը ստորագրելուց հետո Արթուր Բաղդասարյանը նշեց, որ սա եւս մեկ անգամ փաստում է, որ Հայաստանն ու Եվրոմիությունը սերտ համագործակցում են. «Մեր հարաբերությունները խիստ արդյունավետ են, ինչ վերաբերում է այս ծրագրին, ապա ես հույս ունեմ, որ բացառապես գերազանցիկ շրջանավարտներ կմտնեն այստեղ», շեշտեց Բաղդասարյանը:

ԵՄ-ի պատվիրակության ղեկավար դե Լուցենբերգերն ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւան իրենց խոսքում ընդգծեցին, որ անչափ կարեւոր է, որ հայ երիտասարդ մասնագետների «եվրոպական փորձը» մնալու եւ արմատավորվելու է Հայաստանում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման ոլորտը բարեփոխումների կարիք ունի

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** փետրվարի 2-ին ընդունել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի ճգնաժամերի կանխարգելման եւ վերականգնման բյուրոյի պատվիրակությանը **Նեյջլ Քալտոնի** գլխավորությամբ:

Նեյջլ Քալտոնը ներկայացրել է ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի նպատակը, այն է՝ իրականացնել Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման կազմակերպությունների կարողությունների գնահատում, մշակել աղետների կանխարգելման գործողությունների ծրագիր՝ ներառելով առաջարկներ Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործող միջազգային կազմակերպություններին:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանում նշված ոլորտում առկա իրավիճակի եւ անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում, ուստի այս ոլորտում բարեփոխումները պետք է խորացվեն: Եթե ճգնաժամերի կառավարման արդյունավետ համակարգ ձեւավորվի, հնարավոր կլինի լավ արդյունքներ գրանցել: Անհրաժեշտ է միջազգային հանրության ջանքերը կենտրոնացնել այս ոլորտում որոշակի ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, իսկ Հայաստանում հաջողված փորձը կարող է տարածվել տարածաշրջանի այլ երկրներում:

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# Եթե ՀԱԿ-ը չմիջամտեր, ՍԴՀԿ-ն չէր պառակտվի

ՍԴՀԿ կենտրոնական վարչության անդամ **Վահան Շիրխանյանը** վստահ է, որ կուսակցության գլխավոր պառակտիչը Հայ ազգային կոնգրեսն է: Նրա համար անընդունելի է, երբ որեւէ այլ արտաքին քաղաքական ուժ միջամտում է մեկ այլ ինքնուրույն կուսակցության խնդիրներին:

«Ոչ ոք իրավունք չունի խառնվելու մեկ այլ կուսակցության ներքին խնդիրներին: Արտաքին միջամտությունը բերում է պառակտման: Կուսակցությունը կարող էր հանգիստ լուծել իր ներքին խնդիրները, եթե չլիներ արտաքին միջամտությունն առաջին հերթին կոնգրեսից: Որովհետեւ այն պահին, երբ համահնչակյան կառույցը ճանաչեց արդեն անցկացված համագումարը եւ նրա ընտրած մարմինը, կոնգրեսը չպետք է շտապեր ասել, որ պաշտպանում է մեկ այլին», ասաց Շիրխանյանը:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 2/2/2010 10:26 PM Page 1



# Արեւային էներգիա

## Հայաստանի հելիոֆիկացումը պատմական անհրաժեշտություն է

Հայաստանի հելիոֆիկացման ծրագիրն անձնական նախաձեռնության կարգով հեռավոր 1993 թվականին մշակեցին մի խումբ մասնագետներ` Հայաստանի «Էլեկտրոստանդարտ» ԳՀԻ տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյանի ղեկավարությամբ: Ըստ էության դա հակաճգնաժամային ծրագիր էր Հայաստանի արդյունաբերության համար, որը շատ բարդ վիճակում էր հայտնվել 1989-ին ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության կոնվերսիայի, Սպիտակի ավերիչ երկրաշարժի, Հայաստանի շրջափակման եւ Ղարաբաղի պատերազմի հետեւանքով: Հետխորհրդային տարածքում ոչ մի սուբյեկտ չէր հայտնվել նման ծանրագույն իրավիճակում:

Կոնվերսիայի հետեւանքով Հայաստանի արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մոտ 150 խոշոր ձեռնարկություններ միանգամից կորցրին սեփական արտադրանքի իրացման ավանդական եւ երաշխավորված շուկաները, զրկվեցին կենտրոնացված մատակարարման եւ ֆինանսավորման աղբյուրներից: Դժվար էր կանխագուշակել, թե ինչ ճակատագիր կունենան «Պոզիտրոն», «Էրեբունի», «Էլեկտրոն», «Բազալտ», «Հայէլեկտրո», «Չափիչ», «Ալֆա», «Անի», «Մարս», «Արաքս», «Տրանզիստոր», «Ավտոմատիկա» խոշորագույն գիտաարտադրական միավորումները, որտեղ աշխատում էին 5-30 հազար բարձրորակ բանվորներ, ճարտարագետներ եւ գիտնականներ: Ահավոր երկրաշարժը հիմնահատակ կործանեց Հայաստանի հյուսիսային տնտեսական շրջանը: Շրջափակման հետեւանքով դադարեցին աշխատել Երեւանի, Կիրովականի, Լենինականի, Գորիսի եւ Սպիտակի հաստոցաշինական եւ մեքենաշինական գործարանները, Հայաստանի քաղաքաստեղծ մյուս ձեռնարկությունները:



Կոնվերսիան, ավերիչ երկրաշարժը, շրջափակումը, հետագա ցրտաշունչ ու սովյալ տարիները Հայաստանի տնտեսության ընդհանուր ճգնաժամի լոկ տեսանելի պատճառներն էին: Ստեղծված իրավիճակում մեր տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ էր գնալ ուրիշ (ինչպիսի՞) ճանապարհով, վերապրոֆիլավորել ձեռնարկությունները (ինչպե՞ս) եւ արտադրությանը հարմարեցված արտադրանքից անցնել նոր (ինչպիսի՞) արտադրանքի թողարկմանը` իրացման նոր (ինչպիսի՞) շուկաների համար: Նման անցման համար կպահանջվեին վիթխարի միջոցներ: Անհրաժեշտ էր ստեղծել նոր ԳՀԻ-ների եւ ԿԲ-ների համատեղ օգտագործման ճյուղավորված ցանց, դրանք հանդերձավորել ժամանակակից լաբորատոր սարքավորումներով ու տեխնիկայով, արդիականացնել արտադրությունները, ներդնել նոր տեխնոլոգիաներ, ԽՍՀՄ ձեռնարկությունների արտաքին կոոպերատիվ կապերի առկա համակարգը փոխարինել Հայաստանի ձեռնարկությունների ներքին կոոպերացիայի համակարգով եւ միաժամանակ կազմակերպել արտասահմանյան (ո՞ր) երկրների հետ կոոպերացման աշխատանքը: Այդ աշխատանքների համակարգման պատասխանատվությունը կարող էին ստանձնել Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը, արդյունաբերության նախարարությունը, ճարտարագիտական ակադեմիան կամ արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի միությունը: Այդ կազմակերպությունների անգործությունը եւ հանցավոր դանդաղկոտությունը հանգեցրին մեր հանրապետության արդյունաբերական, տեխնոլոգիական եւ գիտական ներուժի նշանակալի կորստի: Ձեռնարկությունների մասնավորեցումը եւ ապա արտասահմանցիներին գործարանային սարքավորումների ու տեխնիկայի զանգվածային եւ էժանացված վաճառքը վերջնականապես քայքայեցին մեր հանրապետության արդյունաբերական ներուժը: (Փրկվեք ով ինչպես կարող է): Նման պայմաններում Հայաստանի ոչ մի ձեռնարկություն չուներ ճգնաժամային վիճակից ինքնուրույն դուրս գալու հնարավորություն: Տարօրինակ է, բայց փաստ... Ինժեներային եւ գիտական կադրերի հսկայական բանակի պայմաններում Հայաստանը չուներ նույնիսկ բավարար թվով որակյալ մշակող ինժեներներ, որոնք կկարողանային մասնագիտական բարձր մակարդակով լուծել արտադրական ցիկլի կենսական խնդիրները` ուսումնասիրել համաշխարհային շուկան, մշակել ձեռնարկությունների զարգացման ռազմավարություն, արտադրելու եւ արտաքին շուկայում իրացնելու հեռանկարային արտադրանք, եւ այլն: Խորհրդային տարիներին հայկական ձեռնարկությունների համար նման աշխատանք կատարում էին գլխադաս ԳՀԻ-ները: ԽՍՀՄ-ում հաստատված տեխնիկական քաղաքականության համաձայն նոր տեխնիկա եւ տեխնոլոգիա մշակողները («պատճենատերեր»), որպես կանոն գտնվում էին կենտրոնում:

Ծայրամասերում կառուցվում էին ձեռնարկություններ, որոնք պետք է կազմակերպեին արտադրանքների արտադրությունը եւ դրանք ըստ նախատեսվածի ուղարկեին ֆոնդատերերին: Հայաստանի 150 պաշտպանական ձեռնարկությունների արտադրանքի միայն 4 տոկոսն էր մշակված հայ ճարտարագետների կողմից. մնացյալ 96 տոկոսը մշակված էր Մոսկվայի, Լենինգրադի, Գորկու, Վորոնեժի, Վիլնյուսի ԳՀԻ-ներում եւ ԿԲ-ներում: Կար առանձին հանրապետությունների եւ տարածաշրջանների ներքին կոոպերացիայի եւ արտադրական կապերի մյուս ձեւերի սահմանափակման նաեւ ուրիշ քաղաքականություն: Նման խոչընդոտներից մեկը ստեղծվում էր այն ժամանակվա ճյուղային ստանդարտների համակարգով, որը պարտադիր էր Հայաստանի միութենական տարբեր նախարարությունների մեջ մտնող ձեռնարկությունների համար:

Ընդունակ հայ գիտնականների, ինժեներների եւ բանվորների զանգվածային արտահոսքը, ուսանողների պրակտիկայի պատշաճ արդյունաբերական բազայի բացակայության պատճառով բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատություններում եւ պրոֆտեխուսումնարաններում նոր ինժեներային կադրերի պատրաստման ցածր մակարդակը նորանոր բարդություններ էին ստեղծում արդյունաբերության համար:

1993-ին մենք Հայաստանի արդյունաբերության նախարարությանը ներկայացրինք մեր արդյունաբերության բարեփոխման ու զարգացման սեփական հայեցակարգը: Մեր հայեցակարգի գլխավոր սկզբունքը հրաժարումն էր արտասահմանյան նմուշների պատճենման անհեռանկար պրակտիկայից եւ անցումը սեփական մշակման նոր, հեռանկարային արտադրանքի (ապագայի արտադրանքի) ստեղծմանը: Դա մեզ թույլ կտար անջատվել արտասահմանյան մրցակիցներից, որոնք նախընտրում են կիրառել արտադրության զարգացման էքստենսիվ մեթոդներ եւ հույսերը դնում են արտադրանքի մշտական արդիականացման եւ արտադրության տեխնոլոգիայի նորացման վրա: Բնավ ուշադրության չարժանացանք:

Ստիպված եղանք ինքներս կենսագործել մեր հայրենական ատադրության զարգացման սեփական հայեցակարգը: Ֆինանսական ծանր պայմաններում, սակայն, մեր գիտնականների, ինժեներների, բանվորների եւ առանձին ձեռնարկությունների ղեկավարների վճռական աջակցության շնորհիվ մեզ հաջողվեց լուծել գլխավոր խնդիրը: Մենք մշակեցինք մի շարք նոր եւ հեռանկարային արտադրանքներ, հիմք ստեղծեցինք նոր հելիոտեխնիկական արդյունաբերության համար եւ պատրաստ ենք սկսել Հայաստանի հելիոֆիկացման գործընթացը:

**Հելիոֆիկացումը տնտեսական ճգնաժամից Հայաստանի դուրսբերման ռեալ ուղիներից մեկն է: Ինչո՞ւ:**

Այս հարցի պատասխանը կարելի է ստանալ, եթե ուշադրություն դարձնենք մարդկության առջեւ ծառացած համաշխարհային երկու խնդիրների: Դրանք են սպասվող ընդհանուր էներգետիկ ճգնաժամը եւ դրանց ուղեկցող ընդհանուր բնապահպանական ճգնաժամը: Աշխարհն անկասելիորեն գլորվում է դեպի այդ երկու փոխկապակցված ճգնաժամերը, որոնք վերջին հաշվով կհանգեցնեն մեծ աղետի, եթե ժամանակին չլուծենք ծագած խնդիրները:

Համաշխարհային էներգետիկ ճգնաժամը կծագի բնական էներգակիրների (գազ, նավթ, ածուխ) սպառման ծավալների մշտական աճի հետեւանքով, էներգակիրներ, որոնց պաշարներն անսպառ չեն: Տեսանելի ապագայում դրանք կսպառվեն: Մեծ ճշգրտությամբ կարելի է նույնիսկ որոշել ընդհանուր էներգետիկ ճգնաժամի սկսվելու պահը, եթե մարդկությունը չգտնի էներգետիկ խնդիրների լուծման ուրիշ եղանակներ: Եթե էներգետիկ հատվածում ոչինչ չփոխվի եւ ամեն ինչ շարունակվի ներկա տեմպերով, ապա մեզ ավելի ահավոր բնապահպանական աղետ է սպասվում այդ նույն բնական էներգակիրների անզուսպ այրումից առաջացող ընդհանուր ջերմացման հետեւանքով: Համաշխարհային ընկերակցությունը փնտրում է ընդհանուր աղետից խուսափելու ուղիներ: Տարբերակները շատ են. խստագույնս խնայողության հաշվին արդյունաբերության մեջ եւ կենցաղում էներգասպառման կրճատում, արտադրությունում նոր էներգախնայողական տեխնոլոգիաների մշակում, ատոմային էներգետիկայի զարգացում, ջերմամիջուկային սինթեզի օգտագործում եւ այլն: Ընդսմին առանձնահատուկ դեր է ստանում նորացվող էներգետիկան` փոքր հիդրոէներգետիկան, հողմաէներգետիկան եւ հատկապես արեգակնային էներգետիկան:

Արեգակնային էներգետիկայի զարգացումն աշխարհի բոլոր տերությունների առաջնային խնդիրներից մեկն է: Այդ նպատակով հատկացվում են խոշոր գումարներ, ներդնողների համար սահմանվում են աներեւակայելի արտոնություններ, օրենսդրական կարգով հաստատվում են արտադրվող արեգակնային էներգետիկայի մեկ միավորի դոտացիոն բարձր գնման գներ եւ այլն: Բազմաթիվ պետություններ ստանձնում են 20 եւ ավելի տարիների հեռանկարով այլընտրական էներգիայի արտադրությունն ու սպառումն ավելացնելու բարձր պարտավորություններ: Այսպես, ԱՄՆ-ը ծրագրում է 2020-ին իր էներգահաշվեկշռում նորացված էներգետիկայի բաժինը հասցնել մինչեւ 20 տոկոսի, ԵՄ-ը` 30 տոկոսի: Այս ուղղությամբ պետական ակտիվ քաղաքականություն են վարում Ռուսաստանը, Չինաստանը, Բրազիլիան եւ այլ երկրներ:

Միամտություն է կարծել, թե տնտեսական ճգնաժամի ներկա պայմաններում առաջատար տերություններն իրենց թույլ կտային լոկ հանուն համամարդկային բնապահպանական խնդիրների լուծման վիթխարի միջոցներ ներդնել արեգակնային էներգետիկայի զարգացման մեջ: Պետություններն ունեն շատ ավելի ծանրակշիռ տնտեսական շահեր: Արեգակնային էներգետիկան այսօր ունի մի չլուծված խնդիր: Դա արեւակայաններում արտադրված էլեկրաէներգիայի բարձր գինն է, որն անհամեմատ գերազանցում է ՀԷԿ-երի կամ ատոմակայանների արտադրանքի գներին: Ազատ առեւտրային պայմաններում ոչ մի ընկերություն չի կարող իրեն թույլ տալ թանկարժեք արեգակնային էլեկտրաէներգիայի օգտագործում հանուն համաշխահային բնապահպանական խնդիրների լուծման: Հենց այդ պատճառով, չնայած արեգակնային էներգիայի անսպառությանը եւ բացարձակ մաքրությանը, արեգակնային էներգետիկան պատշաճ կիրառություն չի գտնում արդյունաբերության մեջ եւ կենցաղում:

Աշխարհի առաջատար տերությունները խոշոր միջոցներ են ներդնում արեգակնային էներգետիկայի տնտեսական ցուցանիշների բարելավման ուղիներ որոնելու համար, մինչեւ ապահովվի արտադրված էներգիայի գրավիչ գին: Դա նրանց առջեւ լայն ճանապարհ կբացի դեպի արեգակնային էներգետիկայի անծայրածիր համաշխարհային շուկա, թույլ կտա արտահանել սեփական տեխնոլոգիաները եւ ստանալ մեծ շահույթ: 1993-ին մեր կատարած հաշվարկների համաձայն, արեգակնային էներգետիկայի համաշխարհային շուկան 2020-ին կազմելու է 4-5 տրիլիոն դոլար: Անգելա Մերկելը 2008-ին Ճապոնիայում «Մեծ ութնյակի» հանդիպման ժամանակ ճշգրտեց` 40 տրիլիոն դոլար: Դա ոչ թե վիրտուալ, այլ միանգամայն իրական շուկա է, որտեղ ամեն պետություն իրավունք ունի փնտրելու եւ գտնելու իր տեղը:

Հայաստանը կարո՞ղ է մասնակցել խոշոր տերությունների մեծ, անզիջում եւ պայթյունավտանգ «արեւային խաղերին» (վերհիշենք քվոտաներին վերաբերող Կիոտոյի կիսահամաձայնագիրը եւ Կոպենհագենի անպտուղ հանդիպումը) եւ ընդսմին ստանալ ինչ-ինչ շահաբաժիններ: Կարող է: Ավելին, դա մեզ համար սեփական տնտեսական ճգնաժամից դուրս գալու հարմար ալիք է: Հարկավոր է անհապաղ ձեռնամուխ լինել Հայաստանի եւ Ղարաբաղի հելիոֆիկացմանը:

Հելիոֆիկացումը վիճակված է ոչ միայն Հայաստանին: Բոլոր «արեւային երկրները» վաղ թե ուշ հելիոֆիկացվելու են: Դա անխուսափելի է: Այսօր մենք հնարավորություն ունենք տվյալ ուղին բռնելու նախագնացի ազնիվ դերում, ստանալու տնտեսական եւ (ինչը մեզ համար պակաս կարեւոր չէ) քաղաքական շահաբաժիններ: Հելիոֆիկացումը կարող է դառնալ լավ հայկական բրենդ:

Գյուղերի հելիոֆիկացումը ենթադրում է արեգակնային էներգետիկայի զանգվածային կիրառություն գյուղատնտեսական արտադրությունում եւ կենցաղում, ամենուրեք, որտեղ դա հնարավոր է եւ ձեռնտու. գյուղմթերքների վերամշակում, կենցաղային տաք ջրի եւ շոգու ստացում, անասունների խնամքի համար տաք ջրի ստացում, գոմաղբից կենսագազի եւ օրգանական պարարտանյութի կորզում, աղբի օգտահանում, տների ջեռուցում, գյուղական դպրոցների ու հիվանդանոցների համար կենցաղային տաք ջրի ստացում, հողերի ոռոգման համակարգերում արեգակնային շոգետուրբինային պոմպերի օգտագործում, փողոցների լուսավորություն եւ շատ այլ բաներ: Ընդսմին էներգախնայողությունը կարող է կազմել 40-60 տոկոս, բայց դա չէ այն գլխավոր օգուտը, որ կարելի է ստանալ գյուղերի հելիոֆիկացումից:

Գյուղատնտեսության մեջ հելիոտեխնոլոգիաների արմատավորումը թույլ կտա ձեռնամուխ լինել էկոլոգիապես մաքուր գյուղմթերքների արտադրությանը: Զարգացած երկրներում նման սննդամթերքների գները սովորական գներից 3-5 անգամ բարձր են:

Արդյունաբերության մեջ հելիոֆիկացումը թույլ կտա գիտաարտադրական լայն գործունեություն ծավալել մեքենաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, գիտական սարքաշինության ձեռնարկություններում, հատուկ հելիոտեխնիկական համակարգերի արտադրություն կազմակերպել` ի խնդիր առանձին երկրների եւ մայր ցամաքների հելիոֆիկացման: Այն կարող է շարժիչ ուժ դառնալ արդյունաբերության մյուս ճյուղերի համար: Հելիոտեխնիկական արդյունաբերության ստեղծումը թույլ կտա լուծել Հայաստանի համար եւ արտահանության համար հելիոտեխնիկայի զանգվածային թողարկման խնդիրը: Հելիոֆիկացումը կարող է դառնալ Հայաստանի կառավարության պետական քաղաքականության գերակայություններից մեկը:

Տեխնիկապես եւ տեխնոլոգիապես մենք պատրաստ ենք սկսելու Հայաստանի հելիոֆիկացման գործընթացը: Ամեն ինչ մանրակրկիտ մտածված է. մշակված են DVH սերիայի (1200 մոդել) եզակի անհատական կոմբինացված հելիոհամակարգեր, 9 մոդելներ հաջողությամբ շահագործային փորձարկումներ են անցել Հայաստանի տարբեր կլիմայական շրջաններում, մշակված է հատուկ տեխնոլոգիական սարքավորություն 2-ից մինչեւ 250 կվտ ջերմային հզորության հելիոհամակարգերի զանգվածային արտադրության համար, մշակված է անանցանելի փողոցներ ունեցող ամենահեռավոր գյուղերում հելիոտեխնիկայի մոնտաժման ու շահագործման տեխնոլոգիա, մշակված են մանուկների արեգակնային կոնստրուկտոր-վարժասարքեր, լուծված են մի շարք կազմակերպական հարցեր, առաջարկված է նույնիսկ հելիոֆիկացման ատրիբուտիկան` իր դրոշով եւ օրհներգով: Իր սպառողական ցուցանիշներով (ջերմային հզորության կվտ-ի ամենացածր գին, բարձր հուսալիություն, երկարատեւ կլիմայական ներգործությունների հանդեպ կայունություն, ծառայության 50-ամյա ժամկետ) DVH սերիայի հելիոհամակարգերն աշխարհում իրենց հավասարը չունեն:

Հայրենական արտադրության հելիոհամակարգերի հետ միաժամանակ մենք կարող ենք կազմակերպել արտասահմանյան արտադրության արեւային համակարգերի «վերջնամշակված» ներդրումը, ինչպես նաեւ գյուղական տների ճարտարապետական նախագծումը, հելիոտեխնիկայի ամրակցումը պատրաստի շենքերին եւ այլն: Մի խոսքով, մենք ստանձնում ենք Հայաստանի գյուղերի հելիոֆիկացման պատասխանատվությունը: Այս առումով մենք մեր նախագահ Սերժ Սարգսյանի հավանությունն արդեն ստացել ենք 2008-ին Սառնաղբյուր գյուղում հելիոտեխնիկայի գլխավոր կոնստրուկտորների եւ ձեռնարկությունների ղեկավարների հետ նրա հանդիպման ժամանակ:

Մենք շատ հարցեր ունենք Հայաստանի օրենսդիր եւ գործադիր իշխանություններին: Մենք իրավական հիմք չունենք հելիոֆիկացման համար: Ուրիշ երկրների համեմատությամբ Հայաստանում պայմաններն առավել անպաստ են արեւային համակարգերի արտադրության կազմակերպման եւ կիրառման համար:

ՎԱՀԱՆ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ
Տեխ. գիտ. դոկտոր

AZG NEW PDF.qxd 2/2/2010 10:26 PM Page 1



# Հիտլերը, հայերը եւ Ադրբեջանը

Մի պահ պատկերացնենք սովետական ժամանակաշրջանը, երկիրը ղեկավարում է Իոսիֆ Ստալինը եւ Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսված է: Իսկ հիմա պատկերացնենք, նույն այս ժամանակահատվածում Սովետական Հայաստանից պատվիրակություն, ճշտում ենք՝ հայկական պատվիրակություն է գնում Գերմանիա, որպեսզի խնդրի-առաջարկի Հիտլերին՝ իրականացնելու ծովից ծով Հայաստան գաղափարը: Անշուշտ անհնար է պատկերացնել այս ամենը, սակայն պարզվում է, որ «այդպես էլ եղել է»՝ ըստ հարեւան Ադրբեջանի: «Փաստորեն պարզվում է», որ ադրբեջանցիները գիտեն, թե ինչպես հայերը մեկնել են Բեռլին՝ ֆյուրերին համոզելու, ընդ որում. «Հնարավոր է, որ Ադրբեջանից էլ մեր որոշ մտավորականներ մեկնել են Բեռլին այդ ժամանակ, սակայն նրանք Դեմոկրատական Ադրբեջանի Հանրապետության պաշտպաններն էին, իսկ մեկնել էին, որպեսզի համոզեն Հիտլերին՝ Կովկասը զավթելուց հետո Ադրբեջանը չոչնչացնել: Դե, իսկ հայերը Բեռլինում էին՝ համագործակցելու Հիտլերի հետ՝ ընդդեմ իրենց իսկ հայրենիք կոմունիստական Հայաստանի», գրում է ադրբեջանական «Վեստի.ազ»-ը: Միայն այս մեջբերումը բավական է, որ ապացուցվի հերթական ադրբեջանական կեղծիքը. այդ որտեղի՞ց ադրբեջանցիները Երկրորդ համաշխարհայինի ժամանակ «ստեղծեցին» Դեմոկրատական Ադրբեջանի Հանրապետություն, ընդ որում մենք՝ հայերս, նույն ժամանակ ապրում էինք Սովետական Հայաստանում: Սա այն դեպքում, երբ Հայաստանում սովետական կարգերը հաստատվել են ավելի ուշ, քան Ադրբեջանում: Ինչեւէ, իհարկե, պատմական ճշմարտությունը նվազագույնը փոխվում է Ադրբեջանում:

«Իրանում ապրող հայերն այդ տարիներին համագործակցում էին ֆաշիստական Գերմանիայի հետ,- շարունակում է «Վեստ.ազ»-ը,- ընդ որում՝ ֆաշիստները հրահրում էին նրանց հենց Իրանի դեմ՝ խոստանալով օգնել ստեղծելու «Մեծ Հայաստանը»: Դե, իսկ հայերը իրենց «Մեծ Հայաստանի» համար պատրաստ են համագործակցել նույնիսկ սատանայի հետ: Հայերը միշտ էլ այս հարցում համագործակցել են աշխարհի ուժի կենտրոնների հետ. սկզբում խաչակիրներն էին, հետո Ռուսական, Բրիտանական կայսրությունները, հետո նաեւ Սովետական Ռուսաստանը»: Երկրների այն շարքը, որը թվարկում է ադրբեջանական կայքը, ընդամենը ցույց է տալիս, թե Հայաստանն այս տարածաշրջանում որքան հնաբնակ է (իհարկե, ոչ ամբողջությամբ-Հ.Ա.), իսկ, թե ո՞ւր էր, ասենք, խաչակիրների ժամանակ Ադրբեջանը, կամ ո՞ւմն էր Ղարաբաղը, Ադրբեջանում, իհարկե, չգիտեն:

Սակայն վերադառնանք Հիտլերին: «Վեստի.ազ»-ը շարունակում է. «Այնուամենայնիվ Հիտլերն այդքան էլ չէր վստահում հայերին: Մի օր նա հերթական անգամ մերժելով հայերի խնդրանքը, ասաց՝ էությամբ դավաճան ազգը անընդհատ կդավաճանի»: Մեզ մնում է միայն խորհուրդ տալ հարեւան երկրին ավելի մանրամասն կարդալ գոնե սովետական ժամանակաշրջանի պատմությունը: Իսկ այդ պատմությունը ապացուցել է, որ եթե Գերմանիան կործանում էր Սովետական Ռուսաստանը, ֆաշիստների դաշնակից Թուրքիան մտնում էր Հայաստան՝ իրականացնելու, ի դեպ, Մեծ Թուրան ծրագիրը, առաջին հերթին հենվելով ադրբեջանցի «կարդաշների» վրա: Սա իմանալով մի՞թե կարելի է շարունակել պնդել, որ հայերը համագործակցել են ֆաշիստների հետ, մի՞թե հայերին ձեռնտու էր Թուրքիայի ներխուժումը Հայաստան, եւ վերջապես մի՞թե հայերը թուրքական ներխուժմամբ էին կառուցելու Մեծ Հայաստանը: Միեւնույն ժամանակ, նույն սովետական ժամանակների պատմությունից տեղեկանում ենք, որ հայերը Համաշխարհային երկրորդ պատերազմում ամբողջ սովետական երկրում չորրորդն էին՝ տված հերոսների թվով, մի՞թե սա դավաճանի քայլ է, իսկ քանի՞ հերոս կամ զորահրամանատար է տվել Սովետական Ադրբեջանը, Ադրբեջանում դա էլ, իհարկե, չգիտեն:

Վերջում «Վեստի.ազ»-ը իր ստերը գագաթնակետին է հասցնում. «Այսօրվա իրականությունը եւս մեկ անգամ ցույց է տալիս հայի ինքնությունը: Այդ ազգի ներկայացուցիչը միշտ դանակը ձեռքին է պահում, որպեսզի ամեն հարմար պահի մխրճի այն երկրի սիրտը, որտեղ ապրում է»: Ընդամենը անուններ տանք՝ Շառլ Ազնավուր, Քըրք Քըրքորյան, Ռուբեն Մամուլյան, Անրի Վեռնոյ, Արամ Խաչատրյան, Տիգրան Պետրոսյան եւ այլք, նրանք մարդիկ են, որոնք «դանակահար են արել աշխարհը»: Մինչդեռ ադրբեջանցի ծայրահեղականները ոչ միայն դանակ, այլեւ կացին են սիրում պահել իրենց մոտ, որպեսզի ծառայակից հայ սպային քնած ժամանակ սպանեն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# 2009-ին աշխարհում 113 լրագրող է սպանվել

**2009 կարելի է ռեկորդային տարի համարել լրագրողների եւ լրատվամիջոցների աշխատակիցների սպանության ցուցանիշով: Լրագրողների միջազգային դաշնության ներկայացուցիչները, հենվելով ամենամյա զեկույցի արդյունքներին, տարին համարել են վատագույն: Նախորդ տարվա ընթացքում աշխարհում իր մասնագիտական պարտքը կատարելիս մահացել է 139 լրագրող: 113-ին սպանել են, որից 52-ը՝ Ասիայի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Լրագրողների սպանությունների թվով երկրորդ տեղում է Ամերիկան՝ 19 դեպք, այնուհետեւ՝ Եվրոպան ու Միջին Արեւելքը՝ 9-ական դեպքով: Զեկույցում Հայաստանը այն երկրների շարքում է, որտեղ լրագրող չի սպանվել, 6 լրագրող է սպանվել Ռուսաստանում, 1-ը՝ Թուրքիայում: Աֆրիկայում սպանության դեպքերը 7-ն են: Լրագրողների սպանության դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Ֆիլիպիններում՝ 37, եւ Մեքսիկայում՝ 13: Ըստ փորձագետների, դրանք նախատեսված սպանություններ են, որոնց նպատակն է կեղտոտ բարքերը թաքցնել հասարակությունից: Լրագրողները զոհվել են ավազակների, կրոնական ծայրահեղականների քաղաքական գանգստերների, զինված ուժերի ներկայացուցիչներ ձեռքով: Հ. Հ.**

# Խաղաղապահներն ամբաստանվում են ապստամբներին օգնելու մեջ

**Սուդանի իշխանությունները Դարֆուրում տեղաբաշխված ՄԱԿ-ի եւ Աֆրիկյան միության խաղաղարար առաքելության աշխատակիցներին ամբաստանել են ապստամբներին պարեն եւ վառելիք մատակարարելու մեջ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**



**Սուդանի զինված ուժերի ներկայացուցչի խոսքերով, խաղաղապահները Խարտումին չեն հայտնել, որ «Արդարության եւ հավասարության շարժում» ապստամբական խմբավորման անդամները հափշտակել են խաղաղարար ուժերին պատկանող պարենի ու վառելիքի 8 ֆուրգոն: Դա հիմք ընդունելով՝ իշխանությունները պնդում են, թե խաղաղապահները գործարք են կնքել ապստամբների հետ եւ դիտավորյալ նրանց են հանձնել ֆուրգոնները:**

**Մինչդեռ խաղաղարար առաքելության աշխատակիցները մերժել են Սուդանի իշխանությունների ամբաստանությունը, հավաստիացնելով, որ իրենք լիովին անկողմնակալ են:**

**ՄԱԿ-ի եւ Աֆրիկյան միության խաղաղարար առաքելությունը հիմնվել է 2007-ի հուլիսի 31-ին, Անվտանգության խորհրդի թիվ 1769 բանաձեւին համապատասխան: Առաքելության մանդատը երկու անգամ երկարաձգվել է, վերջին անգամ՝ մինչեւ 2010-ի հուլիսի 31-ը:**

**Սուդանում աֆրիկյան բնակչության տեղական խմբավորումների եւ կառավարամետ արաբական «Ջանջավիդ» զինված կազմավորումների բախումները տեղի են ունենում 2003 թվականից: ՄԱԿ-ի գնահատումների համաձայն՝ հակամարտության տարիներին զոհվել է մոտ 300 հազար մարդ, սակայն Սուդանի կառավարության պաշտոնական տվյալներով՝ բախումների հետեւանքով սպանվել է 10 հազար մարդ:**

# «Այս բանակով մենք պետք է մոռանանք Ղարաբաղը»

## *Կարծում են շարքային ադրբեջանցիները*

«Ադրբեջանական բանակում տարբեր տեսակի բացասական երեւույթներ կան, ընդհուպ՝ զինվորների բռնաբարություն: «Կաշառակերությունը բանակում նորմալ երեւույթ է դարձել», «Նման բանակով մենք պետք է մոռանանք Ղարաբաղը», «Ինձ հայտնի է, որ աղքատ տղաների գլխին բանակում ամեն ինչ սարքում են», «Ես անձամբ վկա եմ եղել, թե փող չտալու պատճառով սպան ինչպես է ջարդել զինվորի բերանը»: Այս ամենը ադրբեջանական՝ «տարածաշրջանի ամենահզոր բանակի» մասին է, ընդ որում մեջբերումները հայկական լրատվամիջոցներից չեն. այս ամենը բարձրաձայնում են շարքային ադրբեջանցիները:

Հայկական բանակի օրը՝ հունվարի 28-ին, ադրբեջանական բանակի Դաշքեսանի զորամասերից մեկում երկու զինվոր սպանել էին 4-ին, հետո ինքնասպան եղել (այս մասին «**Ազգ**»-ը գրել էր), եւ ահա ադրբեջանական «Ազադլիգ»-ը ներկայացրել է ադրբեջանական հասարակության վերաբերմունքն ու գնահատականները: Ընթերցող Իլքինը «Ազադլիգ»-ի էջերում գրում է. «Ժողովրդավարական երկրներում նման իրադարձությունից հետո պաշտպանության նախարարը հրաժարական է տալիս, իսկ Սաֆար Աբիեւին «Փառքի» շքանշան են տալիս: Նման բանակով ոչ մի շրջան հնարավոր չէ վերադարձնել: Ափսոս տրամադրվող միլիարդավոր գումարները, որ այդպես էլ բանակը չի զարգանում»: «Զինծառայության հենց առաջին օրվանից սպաները, «դեմբելները» ու սերժանտների հետ նորակոչիկներին «հասկացնում են», որ զորամասում կատարվող իրադարձությունների մասին լռեն, որ այդ մասին տեղեկացնողը «ազգի դավաճան է» եւ «նզովյալ: Բոլոր այս իրադարձությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանի ծախու ռեժիմի բանակում կարգուկանոն չկա», գրում է Էլվին Բյունյադը:

Խնայելով մեր ընթերցողին՝ սահմանափակվենք այսքան մեջբերումներով, մինչդեռ դրանք, եւ ընդ որում՝ ամոթալիները, բազմաթիվ են:

Հ. Ա.

# Իսրայելցի երկու սպաներ պատժվել են ֆոսֆորային ռումբերի կիրառման համար

Իսրայելի բանակային աղբյուրները Ֆրանսպրեսին հայտնել են, որ քննությամբ պարզվել է այն սպաների ինքնությունը, որոնք պատասխանատու են 2009-ի սկզբին Գազայի հատվածում ֆոսֆորային արկեր օգտագործելու համար:

Բրիգադային գեներալ Էյալ Էյզենբերգը եւ գնդապետ Իլան Մալկան մեղադրվել են պաշտոնական իրավասությունների վերազանցման եւ բնակելի թաղամասերում հրետակոծության կանոնների խախտման մեջ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ երկու սպաներն «արդեն պատժված են»: Թե Էյզենբերգի եւ Մալկայի նկատմամբ ինչպիսի պատիժներ են կիրառվել, չի հաղորդվում:

Սպիտակ ֆոսֆորով լցոնված արկեր օգտագործվել էին 2009-ի հունվարի 15-ին՝ Գազայի հատվածում իսրայելական բանակի գործողության ավարտից երկու օր առաջ: Զինվորականները չեն ժխտում ֆոսֆորային արկերի օգտագործման փաստը, բայց ասում են, թե դրանց թիրախը եղել են «Համասի» գրոհայինները, ոչ թե խաղաղ բնակչությունը:

Ամեն դեպքում հայտնի է, որ մի քանի արկ ընկել էր ՄԱԿ-ի՝ պաղեստինցի գաղթականներին օգնող գործակալության տարածքում: Իսրայելցիների այդ գրոհից տուժել էին առաքելության մի շարք աշխատակիցներ եւ խաղաղ պաղեստինցիներ:

Մարտադաշտում ծխածածկույթի ստեղծման նպատակով սպիտակ ֆոսֆորի կիրառությունը չի արգելվում, սակայն ֆոսֆորային արկերի օգտագործումն արգելվում է, եթե առկա է քաղաքացիական անձանց առողջությանն սպառնացող վտանգ:

Իսրայելի ռազմական գերատեսչությունները հիշյալ միջադեպի քննությունը սկսել էին, երբ իրավապաշտպան մի քանի կազմակերպություն հաղորդել էին 2009-ի հունվարին Գազայի բնակչության դեմ ֆոսֆորային արկերի օգտագործման մասին:

Սպիտակ ֆոսֆորի գնդիկները մարդու մարմնին դիպչելիս հարուցում են ցավոտ եւ երկար ապաքինվող ֆիզիկական ու ջերմային այրվածքներ: Թեթեւակի տուժած անձինք կարող են զգալ կարճատեւ տկարություն: Լրջորեն տուժելու դեպքում բացառված չէ կենտրոնական նյարդային համակարգի, լյարդի եւ սրտանոթային համակարգի գործունեության խանգարումը:

# Տիբեթը անհիմն է համարում ՉԺՀ-ի մտահոգությունը

**Տիբեթի տարագիր կառավարությունը երեկ «անհիմն» է բնութագրել Պեկինի մտահոգությունը ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի եւ տիբեթցիների հոգեւոր առաջնորդ Դալայ-լամայի հնարավոր հանդիպման կապակցությամբ:**

**«Մենք կարծում ենք, որ ԱՄՆ-ի դերը Դալայ-լամայի բանագնացների եւ ՉԺՀ կառավարության արդար եւ ազնիվ երկխոսության դյուրացումն է», հայտարարել է Տիբեթի տարագիր կառավարության խոսնակ Թուբտեն Սամփելը, որի խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Չինաստանը ԱՄՆ-ին նախազգուշացրել էր, որ ինքը ցանկալի չի համարում նախագահ Օբամայի հանդիպումը Տիբեթի բուդդայականների առաջնորդի հետ: Նշվել էր, որ հանդիպումը կարող է «լրջորեն վնասել» չին-ամերիկյան հարաբերությունները: Այս կապակցությամբ «Ֆիգարո» թերթը հիշեցնում է, որ Չինաստանն ամեն անգամ օտարերկրացի բարձրաստիճան պաշտոնյաներին նախազգուշացնում է Դալայ-լամայի հետ նրանց հանդիպումներից առաջ:**

**Տարագիր Դալայ-լաման 1959-ից բնակվում է Հնդկաստանի հյուսիսում՝ Դհարամսալա քաղաքում: Նա փետրվարի 16-ին Վաշինգտոն է մեկնելու տասնօրյա այցելությամբ: Առայժմ չհաստատված տեղեկությունների համաձայն՝ հնարավոր է Դալայ-լամայի հանդիպումը նախագահ Օբամայի հետ:**

**Տիբեթի տարագիր կառավարության խոսնակը ՉԺՀ-ին հորդորում է չմտահոգվել, քանի որ «Միացյալ Նահանգները պաշտպանում է Նորին Սրբության դիրքորոշումը, ըստ որի Տիբեթի հարցը պետք է լուծվի չինական սահմանադրության շրջանակներում»:**

**Ի դեպ, Պեկինը փետրվարի 1-ին հայտարարեց, որ ինքը հրաժարվում է զիջումներ անել Տիբեթի նկատմամբ Չինաստանի ինքնիշխանության հարցում:**

AZG NEW PDF.qxd 2/2/2010 10:25 PM Page 1



ԹԱՏՐՈՆ

# Ոչ թե հանդիսատեսի պակաս կա, այլ՝ լավ ներկայացումների

Գարեգին Նժդեհի հրապարակում տեղակայված «Մեսրոպ» թատրոնն արտաքուստ նման է մի սովորական կիսաավեր կրպակի: Թատրոնը հիմնովին վերանորոգվել է 1992թվականին՝հիմնադրման օրը: Չնայած շենքային անբարենպաստ պայմաններին՝ այստեղ տիրում է թատերական ակտիվ եռուզեռ:

«Մեսրոպ» թատրոնում կարելի է տեսնել թատերական արվեստի տարբեր նորարարություններ: Թատրոնը չունի գեղարվեստական ղեկավար զուտ այն պատճառով, որպեսզի ռեժիսորներն այստեղ կարողանան ազատ ստեղծագործել: Այսպես, ամեն



մի ռեժիսոր իր գեղարվեստական մտածողությունն է բերում թատրոն, ինչով էլ պայմանավորված է հանդիսատեսի հետաքրքրությունը դեպի այս թատրոնը:

«Բեմադրության համար անհրաժեշտ ծախսերը հոգում է թատրոնը, ոչ թե ռեժիսորը: Հանդիսատեսից չենք բողոքում, այսօր մենք ունենք ոչ թե հանդիսատեսի պակաս, այլ լավ ներկայացումների», ասում է «Մեսրոպ» թատրոնի տնօրեն **Կարեն Միրաքյանը**:

Ամենաէժան ներկայացման համար պահանջվում է 5-10 հազար դոլար, թատրոնը դիմել է մշակույթի նախարարությանը, որպեսզի վերջինս գոնե մի ներկայացում հովանավորի, բայց պատասխան դեռ չի ստացել:

«Հյուրախաղերով հանդես ենք եկել Հայաստանի տարբեր մարզերում, ունենք նաեւ արտասահմանում խաղալու հրավերներ, բայց դե դուրս մեկնելու համար հովանավորներ չունենք», նշում է Կարեն Միրաքյանը:

«Մեսրոպ» թատրոնը իրականացնում է նաեւ բարեգործական ծրագրեր. անվճար տոմսեր է բաժանում մանկատներին ու դպրոցներին: Ըստ տնօրենի՝ եթե 10 երեխա գա թատրոն, ապա նրանցից 3-ը հետագայում կդառնան նվիրված հանդիսատես: Դեռ վաղ հասակից երեխաները պետք է առնչվեն արվեստի հետ, որպեսզի հետագայում գնահատեն ու սիրեն արվեստը:

Այսօր քիչ են թատրոնին նվիրված դերասանները: Եթե դերասանը թատրոնում ստանում է 30 հազար դրամ, ապա նա ստիպված խաղում է նաեւ սերիալներում կամ վարում է տարբեր անճաշակ շոուներ:

«Մեսրոպ» թատրոնը պատկանում է Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնին և գործում է կրթության ու գիտության նախարարությանը կից:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՐՁՐԱՑՈՂ ԱՍՏՂԵՐ

# Ֆրանսիայի երաժշտական մրցանակի թեկնածու՝ Աննա Կասյան

**«Ազգը»** հունվարի 23-ի համարում տեղեկացրեց, որ Ֆրանսիայի 3-րդ հեռուստաալիքը եւ RFI ռադիոկայանը փետրվարի 8-ին հեռասփռելու են դասական երգարվեստի մրցույթ-շոու, որին առաջին անգամ կմասնակցի 2003-ից Ֆրանսիայում բնակվող հայ սոպրանո Աննա Կասյանը: Թերթը նաեւ գրեց, որ հաղթողները հայտնի կդառնան ինտերնետային քվեարկությամբ (տվյալ դեպքում www.AnnaKasyan.com/ru):

Փարիզի «Աշխարհ» թերթը դեռ 2005-ին փայլուն ապագա էր կանխագուշակել Աննա Կասյանի համար, որը նույն թվականի հունիսի 21-ին «Սիտե դը լա մյուզիք» երաժշտական համալիրի թանգարանի ամֆիթատրոնում ունկնդիրներին հիացրել էր սեփական ձայնային կարողությունների լայն ընդգրկմամբ:



Թբիլիսիում հայ երաժիշտների ընտանիքում ծնված Աննա Կասյանը վաղ հասակում սովորել է դաշնամուր եւ ջութակ նվագել, իսկ 2001-ին ընդունվել է Թբիլիսիի կոնսերվատորիայի երգեցողության բաժին: Ուսումը 2003-ին շարունակել է Փարիզում՝ Երաժշտության մանկավարժական դպրոցում: 2004-ի սեպտեմբերին, 22 տարեկան հասակում ընդունվել է Փարիզի Երաժշտության ազգային բարձրագույն կոնսերվատորիայի դասարան:

Աննան մի շարք մրցույթների դափնեկիր է. մասնավորապես ստացել է կանանց երգեցողության ADAMI մրցույթի 1-ին մրցանակը, Ֆրանսիական երգի վարպետների միության երգի միջազգային մրցույթի ֆրանսիական մեղեդու մրցանակը, 2004-ի «Աշնան սիմֆոնիա» մրցույթի Spedidam-ի 1-ին մրցանակը: Նա աչքի է ընկնում Մոցարտի, Դոնիցետտիի, Վեբերի, Բիզեի, Ռիմսկի-Կորսակովի օպերային արիաների փայլուն կատարումներով, ճիշտ արտաբերությամբ, դրամատիկական տաղանդով, հնչերանգների, վիբրատոների ճշմարտացիությամբ, բնական ու հորդաբուխ ձայնով:

Պ. Ք.

# Կիլիկյան ձեռագրերը յուրատիպ են նաեւ իրենց լուսանցապատկերներով

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը լույս է ընծայել մանրանկարչուհի **Սուսաննա Հովհաննիսյանի** (1948-2005) «Կիլիկյան ձեռագրերի լուսանցապատկերները» XIII-XIV դդ. ալբոմը՝ հովանավորությամբ «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի՝ ի դեմս պատվո նախագահի Գաբրիել Ջեմբերջյանի եւ հոգաբարձուների խորհրդի նախագահի Լեւոն Սարգսյանի: Ալբոմը կազմված է Մատենադարանի նյութերի հիման վրա, որոնց վերաբերյալ հեղինակը մանրամասներ է հաղորդում իր գրած առաջաբանում. «Կիլիկյան ձեռագրերում եւ, ընդհանրապես, հայկական մանրանկարչության դպրոցներում, ամենից շատ լուսանցներում հանդիպում են բուսական եւ երկրաչափական զարդեր: Դրանք մեծ մասամբ կազմված են եռատերեւ եւ քառատերեւ ոճավորված բուսահյուսվածքներից, որոնց ոսկեզօծ շրջագծերի մեջ առնված գույները փայլում են թանկարժեք քարերի նման: Մի ամբողջ խումբ են կազմում այն լուսանցազարդերը, որոնց ցողունների գեղեցիկ հյուսվածքները ձգվելով վեր, գագաթներին ունենում են փոքրիկ խաչ կամ թռչուն»:






Սուսաննա Հովհաննիսյանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայ վարպետների նախասիրած զարդամոտիվներից է հնամենի կենաց ծառը, որն իր մեջ խտացնելով իրական եւ երեւակայական գերբնական աշխարհների, տոհմերի ու ցեղերի նախնական գաղափարները, աստիճանաբար հարաբերվելով քրիստոնեական պատկերացումների հետ, իմաստավորում է Քրիստոսի խաչը՝ դառնալով հավիտենական կյանքի խորհրդանիշ:

Հեղինակը նշում է, որ լուսանցներում մեծ թիվ են կազմում Հին կտակարանի կերպարները՝ Դանիել մարգարեն, Հոբը, Հակոբը, Փիլիպոսը, Աբրահամը, Մաղաքիան, Հուդիթը, Հովնանը, Դավիթ թագավորը, Սողոմոն իմաստունը, Ստեփանոս Նախավկան, Մովսեսը եւ մյուսները՝ ներկայացված համապատասխան բնագրի հարեւանությամբ: «Երբեմն առանց անունները կարդալու հնարավոր է կռահել, թե ո՞վ է պատկերված՝ Դավիթ թագավորը՝ պալատական շքեղ հագուստով, տավիղը ձեռքին, Եսթերը՝ թագը գլխին, ծալապատիկ նստած, Հուդիթը՝ երկար քողը գլխին:

Նույն եղանակով են ներկայացված նաեւ Նոր Կտակարանի կերպարները. Պողոսը կանգնած, ճաղատ գլխով, Սուրբ գիրքը ձեռքին սեղմած: Հովհաննես Մկրտիչն իրեն բնորոշ խռիվ մազերով է եւ ցույց է տալիս ձեռքին բռնած գալարափաթեթը, որտեղ կան հետեւյալ բառերը. «Ձայն բարբառոյ յանապատի...»: Գրիգոր Լուսավորիչը պատկերվում է մեծ մասամբ գոտկատեղից վեր եւ միշտ խաչազարդ թիկնոցով: Հետաքրքրական է աղքատ եւ հարուստ Ղազարոսների առակի պատկերումը՝ աղքատը մահից հետո հայր Աբրահամի գրկում, հարուստը՝ սարսափելի վիշապի երախում»:

Ինչպես նշված է առաջաբանում, կիլիկյան ձեռագրերում հանդիպում է մի թեմա, որը գրեթե ընդունված չէ հայկական մանրանկարչության մյուս դպրոցներում: Խոսքը մայրացող կանանց՝ Եղիսաբեթի ու Մարիամի գրկախառնման տեսարանի մասին է: Մատենադարանի թիվ 979 Ճաշոցում միմյանց փաթաթված կանանց որովայնում երեւում են մանուկ Հիսուսի եւ Հովհաննես Մկրտչի գլուխները՝ զարդարված ոսկեզօծ լուսապսակներով: «Հետաքրքրական լուծումներով է տրված Հիսուսի հրաշագործության տեսարանները: Ըստ էության, այդ դրվագներում է ի հայտ գալիս Փրկչի աստվածաշնորհ կարողությունը: Զանազան հիվանդություններից ու արատներից ազատվելու հանգամանքը հույսի եւ փրկության նշանակություն է ունեցել մարդկանց համար, առավել եւս՝ հայի: Դարեր շարունակ գտնվելով վայրենաբարո ցեղերի գերիշխանության տակ, կրելով անասելի տառապանքներ ու զոհողություններ, հաճախ էլ ապաստանելով օտար ափերում՝ հայ մարդը ազատագրման հույսը կապում էր Քրիստոսի հետ», գրել է Սուսաննա Հովհաննիսյանը, հավելելով, որ հրաշագործությունների շարքում կիլիկյան մանրանկարիչներին ամենից շատ գրավել են ծովի հետ կապված տեսարանները: Ինչ վերաբերում է լուսանցներում հանդիպող աշխարհիկ-ֆոլկլորային մոտիվներին, ըստ հեղինակի, դրանք ունեն ճանաչողական նշանակություն: Հատուկ ուշադրության են արժանացել զարդային կամ թեմատիկ այն մոտիվները, որոնք նախնական ձեւերով կապված են եղել հին հավատալիքների ու պատկերացումների հետ, սակայն հետագայում ստացել են նոր իմաստավորում՝ հարմարվելով տիրապետող քրիստոնեական գաղափարներին: Նկատելի են նաեւ շփումները բյուզանդական, լատինական եվրոպական եւ արեւելյան (նույնիսկ հեռավոր) ժողովուրդների արվեստների հետ, որոնք նպաստել են կիլիկյան զարդարվեստը հարստացնելու նոր հորինվածքներով ու պատկերաձեւերով»:

Ալբոմում ընդգրկված են նաեւ Սուսաննա Հովհաննիսյանի կենսագրականը եւ 6 ձեռագրերի մակետները՝ պատրաստված իր իսկ ձեռքով: Աստվածաշնորհ մանրանկարչուհու ընդօրինակած թերթերը ժամանակին ցուցադրվել են Հայաստանի նշանավոր թանգարաններում, Երուսաղեմի Սբ Հակոբեանց վանքում, Գերմանիայի Բոխում քաղաքում եւ այլուր: Նրան հրավիրել են մասնակցելու հայկական միջնադարյան եկեղեցիների որմնանկարչության ընդօրինակման աշխատանքներին. Արուճի VII դ. պալատական եկեղեցին, Ղրիմի ս.Խաչ հայկական վանքը եւ այլն: Անմիջականորեն շփվելով մեծարժեք բնագրերի հետ, տարիների ընթացքում նա ընտրել, հավաքել է նյութեր՝ կազմելու կիլիկյան ձեռագրերի լուսանցապատկերներին նվիրված շքեղ ալբոմը, որը կարողացել է ավարտել ֆիզիկական ուժերի լարման եւ ծանր հիվանդությանը դիմակայելու պայմաններում: Եվ ահա այդ ալբոմը Մատենադարանի տնօրինության ջանքերով ներկայացվում է արվեստասեր լայն հասարակայնությանը, որպես մնայուն եւ գեղեցիկ հուշարձան՝ ի հիշատակ իսկական մատենադարանցու եւ ազնվագույն մարդու՝ մանրանկարչուհի Սուսաննա Հովհաննիսյանին:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հայերը Թուրքիայում անցյալ դարասկզբին

«Հայերը Թուրքիայում հարյուր տարի առաջ» գրքի հեղինակ, թուրք հավաքորդ Օսման Քյոքերի նախաձեռնությամբ Փարիզի 19-րդ շրջանի առափնյակներից մեկում (մետրո «Ռիքե») հայկական «Հող եւ մշակույթ» կազմակերպությունը հունվարի 28-ից ներկայացնում է «Սիրելի եղբայր» վերտառությամբ փոստային բացիկների ցուցահանդես: Անցյալ դարասկզբի մեծացված բացիկները, որոնց, ինչպես նաեւ գիրք-ալբոմին, քանիցս անդրադարձել է **«Ազգը»**, պատկերում են հայերի կյանքը Թուրքիայում հարյուր տարի առաջ: Փոստային բացիկներն առնված են «Օռլանդո Կառլո Կալումենո» հավաքածուից: Ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ մարտի 2-ը: Մուտքը ազատ է:

Պ. Ք.

# Մեր օլիմպիականներից սպասելիքները համեստ են



**ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը օլիմպիադայի մասնակցի քարտը հանձնում է Արսեն Ներսիսյանին**

Փետրվարի 12-ին Կանադայի Վանկուվեր քաղաքում կտրվի ձմեռային 21-րդ օլիմպիական խաղերի մեկնարկը: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, համաշխարհային սպորտի այդ ստուգատեսին Հայաստանը ներկայացված կլինի 4 մարզիկով: Դահուկավազքում հանդես կգան գյումրեցի Քրիստինե Խաչատրյանն ու աշոցքցի Սերգեյ Միխայելյանը, իսկ լեռնադահուկային սպորտի մրցումներին կմասնակցեն ամերիկահայ Անի-Մաթիլդա Սերեբրակյանն ու ծաղկաձորցի Արսեն Ներսիսյանը: Վերջինս կլինի մեր պատվիրակության դրոշակակիրը խաղերի բացման արարողության ժամանակ:

ՀՀ մարզական պատվիրակության գլխավոր հանձնակատարը ՀԱՕԿ-ի փոխնախագահ Դերենիկ Գաբրիելյանն է: Վանկուվեր կմեկնեն նաեւ մարզիչներ Սլավիկ Սարգսյանը, Գագիկ Սարգսյանը, Գառնիկ Հակոբյանը, Սամվել Հակոբյանը, Լյովա Հարությունյանը, Ասատուր Պողոսյանը, ինչպես նաեւ մարզական լրագրողներ Կարեն Գիլոյանն ու Կարո Պողոսյանը:

Երեկ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում կայացավ օլիմպիական պատվիրակության հանդիպումը լրագրողների հետ, որին ներկա էին նաեւ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանն ու նորանշանակ նախարար Արթուր Պետրոսյանը:

Դերենիկ Գաբրիելյանը տեղեկացրեց, որ ՀՀ հավաքականը օլիմպիական խաղերին կմասնակցի «Ասիքս» ֆիրմայի մարզահագուստով: Նախապատրաստական բոլոր աշխատանքները՝ ուսումնամարզական հավաքներ, հանրապետական եւ միջազգային մրցաշարեր, ներառյալ հանդերձանք, մարզահագուստ, ֆինանսավորում, դրական լուծում են ստացել ՀԱՕԿ-ի նախագահի աջակցությամբ:

**Գագիկ Ծառուկյանը** բարի ճանապարհ եւ հաջող մրցելույթներ մաղթեց մեր օլիմպիականներին. «Սկսվում են ձմեռային օլիմպիական խաղերը, որոնց մասնակցելու ենք չորս մարզիկներով: Մեր ցանկությունն է, որպեսզի կարողանանք լավ մասնակցել: Իհարկե, մեդալների ակնկալիքներ չունենք, սակայն եթե հաջողվի որեւէ մեկին լավագույն տասնյակում հայտնվել, դա արդեն մեծ հաջողություն կլինի: Ունենք լավ մարզիկներ, սակայն Հայաստանի բնակլիմայական պայմանները թույլ չեն տալիս շուրջ տարին մարզվելու ձմեռային մարզաձեւերի մեր ներկայացուցիչներին: Ճիշտ է, աշխատում ենք ուսումնամարզական հավաքներ անցկացնել արտերկրում, մասնակցել միջազգային մրցումների: Դուք երիտասարդ, առույգ մարզիկներ եք ու պետք է ձգտեք ձեր աշխատասիրությամբ բարձր արդյունքների հասնել: Բարի ճանապարհ ենք մաղթում ու սպասում ուրախալի լուրերի»:

Վանկուվերում մեր քառյակից առաջինն ասպարեզ դուրս կգա Սերգեյ Միխայելյանը: Նա փետրվարի 15-ին կմասնակցի 15 կմ դահուկային արագավազքին: Երկու օր անց նույն մարզաձեւում կմեկնարկի Քրիստինե Խաչատրյանը: Փետրվարի 21-ին հսկա ոլորավայրէջքի մրցումներին կմասնակցի Արսեն Ներսիսյանը: Նույն մրցաձեւում Անի-Մաթիլդա Սերեբրակյանը հանդես կգա փետրվարի 24-ին: 2 օր անց նա կմասնակցի ոլորավայրէջքի մրցումներին, իսկ հաջորդ օրը նույն մարզաձեւում մեկնարկի դուրս կգա Արսեն Ներսիսյանը:

Հայաստանի մարզիկներն առաջին անգամ ձմեռային օլիմպիադային մասնակցել են 1994-ին, Լիլեհամերում: Վանկուվերի օլիմպիադան մեր մարզիկների համար 5-րդն է: Առայժմ հայ մարզիկները հավատարիմ են օլիմպիական սկզբունքին՝ կարեւորը մասնակցությունն է: Նրանք Վանկուվեր կմեկնեն փետրվարի 5-ին:

# Դարչինյանն ու Աբրահամը նոր մրցակիցներ ունեն

**Հայտնի է դարձել Վախթանգ Դարչինյանի նոր մրցակիցը, որը մարտի 6-ին ԱՄՆ-ի Ռանչո Միրաժ քաղաքում կմենամարտի հայ բռնցքամարտիկի հետ: Այդ օրն առաջին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսները Դարչինյանը պետք է պաշտպանի մեքսիկացի Ռոդրիգո Գեռերոյի հետ մենամարտում: Հիշեցնենք, որ նախապես որոշված էր, որ Դարչինյանի մրցակիցը լինելու է Ռաուլ Մարտինեսը, սակայն կողմերը համաձայնության չէին եկել պարգեւավճարի հարցում:**

**Մեքսիկացի բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում 15 մենամարտ է անցկացրել, որոնցից 13-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, մեկում պարտվել է:**

**Վախթանգ Դարչինյանը շարունակում է աշխատել իր հարվածի ուժը հզորացնելու վրա: Ներկայումս նա մարզումներ է անցկացնում, որոնց նպատակն է բարելավել ոտքերի մկանների արագաուժային հատկանիշները: Այդ գործում հայ բռնցքամարտիկին օգնում են սկավառակի նետման աշխարհի չեմպիոն Դենի Սեմյուելսը, ինչպես նաեւ ռեգբիստների ֆիզպատրաստության մարզիչներ Հեյդեն Նոուլսը եւ Կրեյգ Կեստերիկը: Մարզիչների համոզմամբ, ոտքերի մկանների ուժի ավելացումը կնպաստի նրա հարվածների էլ ավելի հզորացմանը:**

**Ինչպես հայտնի է, մարտի 6-ին նույն Ռանչո Միրաժ քաղաքում ռինգ դուրս կգա նաեւ Արթուր Աբրահամը, որը երկրորդ միջին քաշային կարգի 6 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարում 2-րդ մենամարտը կանցկացնի ամերիկացի Անդրե Դիրելի հետ: Այդ մենամարտին նախապատրաստվելու նպատակով Արթուրը մարզումային մենամարտ կանցկացնի 2-րդ միջին քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն, 43-ամյա գերմանացի բռնցքամարտիկ Սվեն Օտկեի հետ: Վերջինս հնգամյա ընդմիջումից հետո վերադարձել է ռինգ: Նա շաբաթը 5 անգամ հաղթահարում է 11 կմ մրցատարածությունը, տարին մեկ անգամ մարզում է Մայորկայում հանգստացողներին: Օտկեն 82 կգ է եւ իր հավաստմամբ, նախկինի պես դեռեւս արագաշարժ է ու չի վախենում Արթուրի ուժգին հարվածներից:**


**Արթուր Աբրահամն ու Սվեն Օտկեն**

# Պիտերը դատական հայց է ներկայացրել

**Գերծանր քաշային կարգի աշխարհի նախկին չեմպիոն, նիգերիացի Սեմյուել Պիտերը դատական հայց է ներկայացրել ընդդեմ իր նախկին պրոմոութերներ Դոն Քինգի եւ Դինո Դուվուի: Նա նրանց մեղադրում է 2008-ի հոկտեմբերին Վիտալի Կլիչկոյի հետ մենամարտից ստացած պարգեւավճարից իրենից ավելի քան 400 հազար դոլար անհիմն կերպով առեւանգելու մեջ: Բացի այդ գումարից, նա դատարանից պահանջել է որպես տույժ նրանցից գանձել մոտ 1 մլն դոլար:**

**Ինչպես պարզվել է գործի քննությամբ, Կլիչկոյի հետ մենամարտելու համար Պիտերը 4 մլն դոլար պետք է ստանար, որից 800 հազարը պետք է ստանար Դոն Քինգը: Սակայն ըստ Պիտերի, պրոմոութերները յուրացրել են նախատեսված գումարի կեսը: Նախկինում Պիտերը դատական հայց էր ներկայացրել Էդի Չեմբերսի հետ մենամարտի կազմակերպիչների դեմ: Նա բողոքում էր, որ իրեն չեն վճարել մենամարտի հեռուստաիրավունքի վաճառքից հասանելիք գումարը:**

# Ռաուլը դեմ չէ խաղալ Անգլիայում

Ընթացիկ մրցաշրջանում 32-ամյա Ռաուլի համար այնքան էլ հեշտ չէ «Ռեալի» հիմնական կազմում ընդգրկվելը, քանի որ ամռանն արքայական ակումբը զգալի համալրում է ստացել: Նրա պայմանագրի ժամկետը լրանում է 2011-ին: Ռաուլը մտադիր է հավատարմորեն ծառայել հարազատ ակումբին, որի խորհրդանիշն է դարձել:

Ռաուլի գործակալը նշել է, որ ֆուտբոլիստին դուր է գալիս Անգլիայի պրեմիեր լիգան, ուստի բացառված չէ, որ պայմանագրի ժամկետի ավարտից հետո տեղափոխվի Անգլիա: Ժամանակին Ռաուլն առաջարկ էր ստացել Լոնդոնի «Չելսիից»:

ՇԱԽՄԱՏ

# Մովսիսյանը գլխավորեց աղյուսակը

**Ջիբրալթարի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Սերգեյ Մովսիսյանը սպիտակներով հաղթեց ԱՄՆ-ի ներկայացուցիչ Վինայ Բհատին եւ վաստակելով 5,5 միավոր, գլխավորեց աղյուսակը շնորհիվ լրացուցիչ գործակիցների: Նույնքան միավոր ունեն եւս 10 շախմատիստներ, որոնց թվում են Ֆրանսիսկո Վալյեխոն, Մայքլ Ադամսը, Գատա Կամսկին, Համփի Կոներու, Նատալյա Ժուկովան:**

**Ադամսը Ժուկովայի հետ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Վալյեխոն հաղթեց Վադիմ Մալախատկոյին, Կամսկին առավելության հասավ Անտոանետա Ստեֆանովայի նկատմամբ, իսկ Կոներուն պարտության մատնեց Նամիգ Գուլիեւին:**

# Հայ շախմատիստների մասնակցությամբ

**Մոսկվայում մեկնարկել է շախմատային խոշոր փառատոնը, որի շրջանակներում անցկացվում են 6 մրցաշարեր: Ընդհանուր մրցանակային հիմնադրամը 5 մլն ռուբլի է:**

**Գլխավոր մրցաշարում հանդես են գալիս 187 շախմատիստներ: Հայաստանն այդ մրցաշարում ներկայացնում է Աղասի Ինանցը, որն իր անհատական վարկանիշով (2230) մասնակիցների մեջ վերջինն է: Ուստի պատահական չէ, որ նա անհաջող է մեկնարկել՝ 3 հանդիպումներում վաստակելով ընդամենը 0,5 միավոր: Այն ձեռք է բերվել ռուսաստանցի Մատվեյ Շչերբինի հետ մրցավեճում:**

**«Ա» խմբի մրցաշարում հանդես են գալիս նաեւ ռուսաստանցի 5 հայ շախմատիստներ, ինչպես նաեւ Բելառուսը ներկայացնող Մանվել Պողոսյանը: 3 տուրից հետո աղյուսակը նույնքան միավորով գլխավորում են ռուսաստանցիներ Դենիս Խիսմատուլինը եւ Ալեքսանդր Մոտիլյովը:**

**«B» խմբի մրցաշարում հանդես են գալիս 401 շախմատիստներ, որոնցից 5-ը ներկայացնում են Հայաստանը: Եվս 11 հայազգի շախմատիստներ Ռուսաստանից են: 3 տուրից հետո 26 շախմատիստներ 100 տոկոսանոց արդյունք ունեն: Նրանց թվում են նաեւ Տիգրան Ս. Պետրոսյանը, Դավիթ Շահինյանը (երկուսն էլ՝ Հայաստան) եւ ռուսաստանցի Սերգեյ Ջեյրանյանը:**

# Վերջին տասնամյակի լավագույն թեթեւատլետները



**Ամերիկյան Track&Field News հեղինակավոր ամսագիրը հրապարակել է վերջին տասնամյակի (2000-2009) աշխարհի լավագույն թեթեւատլետների տասնյակները: Լավագույն թեթեւատլետուհի է ճանաչվել օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի, ձողացատկի աշխարհի բազմակի ռեկորդակրուհի, ռուսաստանցի Ելենա Իսինբաեւան: 2-րդ տեղում եթովպիացի վազորդուհի Տիրունեշ Դիբաբան է, 3-րդ հորիզոնականը զբաղեցնում է շվեդ բազմամարտիկ Կարոլինա Կլյուֆտը:**

**Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ ռուսաստանցի հեռացատկորդուհի Տատյանա Լեբեդեւան, արագավազորդուհիներ Սանյա Ռիչարդսը (ԱՄՆ), Վերոնիկա Կեմպբել-Բրաունը (Ճամայկա) եւ Էլիսոն Ֆելիքսը (ԱՄՆ), նիզականետորդուհի Օսլեյդիս Մենենդեսը (Կուբա), մրճանետորդուհի Յիպսի Մորենոն (Կուբա) եւ նորզելանդացի գնդահրորդուհի Վալերի Վիլին:**

**Վերջին տասնամյակի լավագույն թեթեւատլետ է ճանաչվել 10 հազար մետր վազքի օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, եթովպիացի Քենենիսա Բեկելեն: 2-րդ տեղում լիտվացի սկավառականետորդ Վիրգիլիուս Ալեկնան է: Լավագույն եռյակը եզրափակում է մարոկկացի վազորդ Հիշամ Էլ Գերուժը: Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, ճամայկացի արագավազորդ, աշխարհի ռեկորդակիր Ուսեյն Բոլտը 4-րդ տեղն է զբաղեցնում:**

**Լավագույն տասնյակում ընդգրկվել են նաեւ մարզական քայլքի մեծ վարպետ, լեհ Ռոբերտ Կորժենովսկին, ամերիկացի վազորդ Ջերեմի Ուորիները, նրա հայրենակից, հեռացատկորդ Դուայտ Ֆիլիպսը, նորվեգացի նիզականետորդ Անդրեաս Տորկիլդսենը, չեխ տասնամարտիկ Ռոման Շեբրլեն եւ քաթարցի Սաիիֆ Շահինը:**

# «Բանանցը» մեկնեց Անթալիա

**Երեւանի «Բանանցն» ուսումնամարզական հավաքի է մեկնել Անթալիա: Մինչեւ Թուրքիա մեկնելը, «Բանանցը» ուժերը չափեց իր դուստր թիմի՝ «Բանանց-2»-ի հետ: Խաղն ավարտվեց փորձառու ֆուտբոլիստների հաղթանակով՝ 4-0: 2 գոլ խփեց Նորայր Գյոզալյանը, մեկական անգամ աչքի ընկան Հովհաննես Համբարձումյանն ու Ժորա Ստեփանյանը:**

**Անթալիա մեկնելուց առաջ «Բանանցի» մարզիչները հրաժարվեցին եւս երկու լեգեոնականներից՝ Մինաս Օսմանիից եւ Ռոդրիգո դա Սոուզա Սիլվայից: Ավելի վաղ թիմից հեռացել էին փորձաշրջանը չանցած Դանիել Գենովը, Գուստավո Լոպեսը, Ալեքսանդր Ֆեռեյրա Բաբտիստան եւ Սեմյոն Զլատեւը: Թիմ է վերադարձել Յարեմա Կավացիվը, որն անցած մրցաշրջանում խաղում էր «Բանանցում»: Նա պետք է փորձաշրջան անցնի թիմում: «Մետալուրգից» թիմ վերադարձած Արարատ Առաքելյանը պայմանագիր է կնքել «Բանանցի» հետ եւ մինչեւ մրցաշրջանի ավարտը հանդես կգա հարազատ ակումբում:**

**«Բանանցն» Անթալիայում հավաք կանցկացնի մինչեւ փետրվարի 21-ը, որի ընթացքում ստուգողական 5 հանդիպում կանցկացնի:**

# «Միկան» պարտվեց

**Անթալիայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Միկան» ստուգողական 3-րդ խաղում 1-2 հաշվով պարտվեց ռումինական «Վասլուին»: Ռումինացիներն առաջին խաղակեսում 2 գոլ խփեցին: Ընդմիջումից հետո «Միկայից» աչքի ընկավ Նարեկ Բեգլարյանը: Ստուգողական հաջորդ խաղում «Միկան» ուժերը կչափի չեխական «Յաբլոնեցի» հետ:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 2/2/2010 10:25 PM Page 1



## Հոբելյան

# Ականավոր գիտնականն ու հայրենասերը

Լրացավ ականավոր գիտնական-մեխանիկոս, ազգային-հասարակական հայտնի գործիչ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Լենսեր Աբգարի Աղալովյանի ծննդյան 70 տարին:

Լ. Ա. Աղալովյանը ծնվել է 1940 թվականի փետրվարի 3-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1961 թվականին գերազանցությամբ ավարտել է Երեւանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1966 թվականին նրան շնորհվում է ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածուի, իսկ 1980 թվականին` ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտորի գիտական աստիճանը: 1996 թվականին Լ. Ա. Աղալովյանն ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:



Աշխատանքային գործունեությունը Լ. Ա. Աղալովյանը սկսել է 1961 թվականից` աշխատելով որպես ասիստենտ Երեւանի պետական համալսարանի տեսական մեխանիկայի ամբիոնում: 1969 թվականից մինչեւ 1987 թվականը աշխատել է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում` որպես ավագ գիտաշխատող: Լ. Ա. Աղալովյանը 1987-2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրենը, 2006 թվականից մինչեւ այժմ նա աշխատում է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի խորհրդական, «Բարակապատ համակարգերի մեխանիկա» բաժնի վարիչ: Լ. Ա. Աղալովյանը` ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է:

Լ. Ա. Աղալովյանի մենագրությունները (Л. А. Агаловян «Асимптотическая теория анизотропных пластин и оболочек». М. Наука, 1997. 415с. . եւ Агаловян Л.А., Геворгян Р.С. «Неклассические краевые задачи анизотропных балок, пластин и оболочек». Ереван. Изд. «Гитутюн» НАН РА, 2005. 468с) հանդիսանում են զգալի ներդրում` տեսական եւ կիրառական մեխանիկայի մի այնպիսի կարեւորագույն ոլորտում, ինչպիսին բարակ մարմինների մեխանիկայի բնագավառն է: Այդ բնագավառում նա էապես զարգացրել է կիրառական մաթեմատիկայի այնպիսի հզորագույն մեթոդներից մեկը, ինչպիսին` ասիմպտոտիկ մեթոդն է: Դասական եզրային պայմանների առկայությամբ մաթեմատիկական կատարյալ նրբությամբ Լ. Ա. Աղալովյանը կառուցել է անիզոտրոպ շերտավոր ձողերի, սալերի եւ թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները, որոնք տեսական հիմք են ժամանակակից կոմպոզիտ նյութերից պատրաստված կառուցվածքների, մեքենաների ու մեխանիզմների տարրերի հաշվարկման եւ նախագծման համար: Նրա կողմից կառուցված ձողերի, սալերի եւ թաղանթների սահմանային շերտի տեսությունը` այնքան կատարյալ է եւ ամբողջական, որ այն կարելի է դասել առաձգականության մաթեմատիկական տեսության դասական ձեռքբերումների շարքին: Կառուցված ասիմպտոտիկ տեսությունները հիմք են ծառայում վարկածային հենքի վրա կառուցված սալերի եւ թաղանթների կիրառական-երկչափ տեսություններին ճշգրիտ գնահատականներ տալու եւ նրանց կիրառելիության սահմանները որոշելու համար:

Համընդհանուր ճանաչում ստացան Լ. Ա. Աղալովյանի աշխատությունները, որոնցում առաջին անգամ կառուցվեցին անիզոտրոպ շերտավոր ձողերի, սալերի եւ թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները, երբ տրված են համարվում ոչ դասական բնույթի եզրային պայմաններ: Կառուցված տեսությունները հնարավորություն ընձեռեցին ուսումնասիրելու եւ լուծելու անիզոտրոպ, շերտավոր սալերի եւ թաղանթների ամրության, սեփական եւ ստիպողական տատանումների, ջերմառաձգականության, ինչպես նաեւ ոչ գծային դրվածքով կարեւոր նշանակության բազմաբնույթ խնդիրներ: Ոչ դասական բնույթի եզրային պայմանների առկայությամբ անիզոտրոպ շերտավոր ձողերի, սալերի եւ թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները նաեւ էական ներդրում են նշանակությամբ չափազանց մեծ` կիրառական այնպիսի լայնածավալ ոլորտում, ինչպիսին շինարարական կառուցվածքների հիմքերն են ու հիմնատակերը, ինչպես նաեւ կիրառական սեյսմաբանությունը: Կիրառական այս նշանակալից ոլորտում մինչեւ վերջերս հաշվարկանախագծային աշխատանքներում կիրառվում էին համարյա կիսափորձնական բանաձեւեր եւ առնչություններ: Լ. Ա. Աղալովյանի տեսական ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին ստանալու արդեն տեսական ճշգրիտ բանաձեւեր, այսպես կոչված, «ներքնակային գործակիցների» հաշվման, սեյսմիկ ալիքների տարածման դինամիկական բնութագրիչների որոշման համար: Լ. Ա. Աղալովյանի տեսական եւ կիրառական խորը ուսումնասիրությունները բազմիցս արժանացել են խոշոր միջազգային դրամաշնորհների (Soros, INTAS, ISTC եւ այլն):

Լ. Ա. Աղալովյանի գիտական գործունեությանը բնորոշ են արդիականությունը, նորարարությունը, բազմակողմանիությունը եւ նպատակաուղղվածությունը: Նրա գիտական հոդվածները, միջազգային գիտաժողովների զեկուցումները, ընդհանրացնող, ամփոփիչ հոդվածները հայտնի են եւ ուսումնասիրվում են Ռուսաստանի, Եվրոմիության, ԱՄՆ-ի եւ աշխարհի այլ երկրների համապատասխան գիտական կենտրոններում:

Լ. Ա. Աղալովյանը մեխանիկայի հայկական դպրոցի վառ անհատականություններից մեկն է եւ իր տաղանդի փայլուն դրսեւորմամբ նրանում ստեղծել է բոլորի կողմից ճանաչված եւ ընդունված արդեն իր ուրույն գիտական դպրոցը: Լ. Ա. Աղալովյանի ղեկավարությամբ պաշտպանվել են մի քանի դոկտորական եւ տասնյակից ավելի թեկնածուական ատենախոսություններ: Նա ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտին կից, ՀՀ ԲՈՀ-ի 047 մասնագիտական խորհրդի նախագահն է:

Անգնահատելի են նրա ծառայությունները ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում 90-ականների դժվար տարիներին գիտական այդ խոշոր օջախի պահպանման եւ հետագա զարգացման գործում:

Հայ հասարակության մեջ չափազանց բարձր է գնահատվում Լ. Ա. Աղալովյանի ազգային, հասարակա-քաղաքական լուրջ գործունեությունը` հատկապես Արցախի համար դժվարագույն ժամանակներում:

Լ. Ա. Աղալովյանը իր համախոհների եւ գործընկերների հետ հիմնադրում (1991 թ.) եւ ղեկավարում է «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը, մեծ գործ կատարելով Արցախի աննկուն ժողովրդի տոկունությունը եւ նրա հերոսական բանակի մարտունակությունը մշտապես բարձր պահելու համար:

Այժմ էլ չափազանց լուրջ, ծանրակշիռ եւ լայնածավալ գիտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման այդ վեհ գործերից զատ, որպես ազգային-հասարակական գործիչ` Լ. Ա. Աղալովյանը քաղաքական մեծ ակտիվություն է ցուցաբերում Արցախի հիմնահարցի վերջնական եւ արդարացի լուծման գործում:

Շնորհավորելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Ա. Աղալովյանին 70-ամյա հոբելյանի կապակցությամբ, ցանկանում ենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք, նորանոր հաջողություններ գիտական, գիտակազմակերպչական եւ ազգային-քաղաքական գործունեության բոլոր ասպարեզներում: Կուզենայինք ապագայում եւս նրան տեսնել գիտական նորանոր ուղղությունների ակոսման, ազգային-հասարակական ժամանակակից խնդիրների կանխատեսման, ձեւավորման եւ այդ խնդիրների հետագա իրականացման համար մարտնչողի դերում:

**Գ. Ե. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**
**Ս. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ**
**Վ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, ֆիզ-մաթ գիտությունների դոկտոր**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

**ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՄՐՑՈՒՅԹ**

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը հրավիրում է **«Վահան Թեքեյան»** ամենամյա մրցանակաբաշխության գեղանկար, քանդակ անվանակարգերի ցուցահանդես-մրցույթի բացմանը, որը տեղի կունենա **2010 թ. փետրվարի 5-ին, ժամը 16-00,** Թեքեյան կենտրոնի ցուցասրահում (Երեւան, Խանջյան 50):

## ԿԲ խորհրդի նիստում

**Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 2-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց ՀՀ ԿԲ 2010-2011 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Թորոս Ռոսլին-800», «Արտաշատ-2200» եւ «Անի-1050» հուշադրամների ուրվագծերը:**

**Խորհրդի որոշմամբ լրացում կատարվեց ՀՀ ԿԲ 2010-2011 թթ. հուշադրամների թողարկման ծրագրում, փոփոխություններ կատարվեցին ՀՀ ԿԲ 2010 թ. գործառնական ծախսերի նախահաշվում եւ կապիտալ ներդրումների ծրագրում:**

**Խորհուրդը որոշեց արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա տրամադրել «ԱԼԵՔՍ-ԳՐԻԳ» ՍՊԸ-ի թիվ 6 մասնաճյուղին: Վերաձեւակերպվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման եւ «Ա/Ձ Սերգեյ Աղայան» փոխանակման կետի արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիաները:**

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ` Վիճակագրության վարչության Վարկային ռեգիստրի **«ապահովագրական ռեգիստրի մասնագետ»** թափուր աշխատատեղի համալրման նպատակով:

**Աշխատանքի նպատակն է.** Ապահովագրական ռեգիստրի տվյալների բազայի ամբողջականության ապահովման նպատակով ապահովագրական ընկերություններից եւ այլ աղբյուրներից տեղեկատվության ստացում, մուտքագրում, ելքային տեղեկատվության հիմնական (ստանդարտ) մասի ձեւավորում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Ապահովագրական ընկերություններից հայտերի ստացում եւ «Ապահովագրական ռեգիստր» համակարգից պատասխանների կազմավորում (ռեզիդենտ ապահովադիրների մասով):

Տվյալների բազայում փոփոխությունների կատարում` ապահովադիրների կողմից ներկայացված առձեռն փաստաթղթերի հիման վրա:

Ապահովագրական ընկերություններին եւ ԿԲ հաշվապահական հաշվառման վարչությանը ամսական տեղեկատվության տրամադրում տեղեկատվության օգտագործման քանակների եւ միջնորդավճարների վերաբերյալ:

Ապահովագրական կազմակերպություններից ստացվող տեղեկատվության ընդունում եւ մուտքագրում «Ապահովագրական ռեգիստր» համակարգ, կարգով նախատեսված պարամետրերի ստուգում եւ ճշգրտում:

Ապահովագրական կազմակերպություններին հաշվետվությունների տեսքով պարբերական ամսական տեղեկատվության տրամադրում:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը**

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում` 6 ամսվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում` 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1.5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում` ապահովագրական օրենսդրություն (խորացված), բանկային օրենսդրություն (միջանկյալ), հաշվապահություն (ներածական), միկրոէկոնոմիկա (ներածական), մակրոէկոնոմիկա (ներածական):

**Լեզուների իմացություն`** հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները` մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ` համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, տվյալների շտեմարանների հետ աշխատելու ունակություն):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը` 2010թ. փետրվարի 17-ը:

**Աշխատավարձը`** 149 500 դրամ (չհարկված):

**Պահանջվող փաստաթղթերը.**

Դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am, «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով` hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (**www.cba.am**) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել` 59-26-34 եւ 26-13 (ներքին):

*Հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**www. azg.am**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 02.21.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: